ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԱՍՑԵ՝ Ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63
(091) 45 90 47
(077) 45 90 47

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ԵՐԵՔՇԱԲԹԻ
31 ՄԱՐՏԻ 2015Թ. № 9 (352)
www.syuniacyerkir.am

Միանալով է մարդը բազմանում. եկեք միանա՞նք:
ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

24 մարտի 2015թ., Սիսիան

Մի քանի տարի հետո մարզում չվերանորոգված դպրոց չի լինելու

Հանրակրթություն

Մարտի 24-ին ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանն աշխատանքային այցով Սյունիքում էր: Գորիսի N4 ավագ դպրոց այցելելուց հետո նախարարը Գորիսի դրամատիկական թատրոնի դահլիճում հանդիպեց մարզի կրթության ոլորտի պատասխանատուների հետ:

Իր ելույթում ԿԳ նախարարը ներկայացրեց այն բոլոր ծրագրերը, որոնք նախատեսվում է իրականացնել տարվա ընթացքում եւ հետագա տարիներին՝ շեշտը դնելով նախադպրոցական, հանրակրթական, միջին-մասնագիտական եւ բարձրագույն կրթության խնդիրների: Որպես առաջնային խնդիր նա համարվեց ՀՀ-ում պարտադիր կրթության նվազագույն շեմի բարձրացումը:

Նա մտահոգիչ համարեց հանգամանքը, որ հանրապետությունում տարեկան 4-4.5 հազար երեխա, ավարտելով 9-րդ դասարանը, կրթությունը ոչ մի տեղ չի շարունակում: **«Իրականում սա բավականին լուրջ խնդիր է մեզ համար, քանի որ այդ երեխաները, չշարունակելով միջնակարգ կրթությունը, չստանալով մասնագիտական որակավորում, ապագայում դատապարտվում են ցածր աշխատավարձով աշխատանք ունենալուն, զրկվում հեռանկար ունենալուց: Բացի դրանից՝ վիճակագրական տվյալներով ամենաշատ օրինախախտումը 9-12-րդ դասարանների տարիքային խմբի երեխաների շրջանում կատարում են նրանք, ովքեր 9-րդ դասարանն ավարտելուց հետո իրենց կրթությունը ոչ մի տեղ չեն շարունակում»**, – նշեց նախարարը եւ հավելեց, որ պետության համար կարեւորագույն խնդիր է այդ երեխաների համար իրենց նպատակին

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 8

Սիսիանում նշվեց Աշոտ Նավասարդյանի 65-ամյակը

Մարտի 28-ին Սիսիանում նշվեց ազգային, պետական, քաղաքական գործիչ, ՀՅԿ հիմնադիր նախագահ Աշոտ Նավասարդյանի ծննդյան 65-ամյակը:

Աշոտ Նավասարդյանը, ճիշտ է, ծնվել է Երեւանում, բայց նրա արմատները Սիսիանի շրջանի Տոլորս գյուղից են: Սիսիան քաղաքի Իսրայելյան փողոցում կանգնեցված նրա կիսանդրու մոտ գործչի հիշատակին հարգանքի տուրք մատուցեցին, ծաղիկներ խոնարհեցին կուսակից ընկերները, նրա ապրած կյանքը, գործունեությունը, գաղափարները գնահատող քաղաքացիներ: Աշոտ Նավասարդյանի անցած ուղու կարեւորագույն դրվագները ներկայացրին Սիսիանի N4 հիմնական դպրոցի աշակերտները՝ ամբողջացնելով կյանքի զգալի հատվածը կալանավայրերում անցկացրած նվիրյալ գործչի, ամուսնու ու հոր դիմանկարը:

Գարեգին Նժդեհի «Ցեղակրոն» գաղափարախոսության հետեւորդը հանդես է եկել խորհրդային ամբողջատիրական համակարգի քննադատությամբ, Հայ դատի պաշտպանությամբ, եղել անկախության դրոշակակիր: Իր գաղափարների տարածման համար երեք անգամ կալանավորվել է եւ դատապարտվել 17 տարվա ազատազրկման ու 5 տարի աքսորի:

«Աշոտ Նավասարդյանն այն քչերից էր, ով դեռեւս խորհրդային ռեժիմի ժամանակ մտածում էր իր երկրի անկախության, ազատության մասին: Չնայած տառապանքներ կրեց, բայց

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 3

Անդրանիկի գրական կերպավորումները

Կլոր սեղան

Հայոց ազգային-ազատագրական պայքարի պատմությունը հարուստ է բազմաթիվ փառավոր անուններով, որոնց շարքում, որպես անզուգական ազգային հերոս, առանձնանում է Անդրանիկը: Նա, իրապես, մեր պատմության բոլոր ժամանակների մեծագույն, չգերազանցված կոթողն է:

Փետրվարի 25-ին լրացավ մեծ հայդուկապետի ծննդյան 150-ամյակը, ինչի առթիվ Գորիսում՝ նրա հուշարձան-կիսանդրու մոտ տեղի ունեցած ծաղկեդրման եւ հարգանքի տուրքի մատուցման արարողությամբ մեկնարկեցին նշանավոր հոբելյանին նվիրված միջոցառումները:

Օրերս պանծալի հային նվիրված միջոցառում էր կազմակերպել նաեւ «Միրհավ» գրական ակումբը՝ հրավիրելով կլոր սեղան-քննարկում՝ «Անդրանիկ Օզանյանի գրական կերպավորումները» թեմայով:

Անդրանիկի կյանքն ինքնին մի փառահեղ, աներեւակայելի հերոսապատում է. նրա լեգենդային կերպարը գրական ներշնչումների է մղել բազմաթիվ հայ գրողների (Վ.Թոթովենց, Համաստեղ, Ա.Ահարոնյան, Ա.Յարճանյան, Խ.Դաշտենց, Հ.Շիրազ, Ս.Խանզադյան եւ ուրիշներ), որոնք ազատագրական պայքարի ընդհանուր ֆոնի վրա կամ առանձին դիմանկարային շեշտադրումներով անդրադարձել են այդ մեծահամբավ հայորդուն ու նրա պատմական վիթխարի դերակատարության արժեւորմանը:

Հանդիպմանը, որին ներկա էին գրողներ, գրասերներ, մտավորականներ, Անդրանիկ Օզանյանի գեղարվեստական կերպավորումների շուրջ առանձին բանախոսություններով հանդես եկան «Միրհավ» ակումբի անդամներ Լ.Թունյանը, Ն.Միրզոյանը, Ա.Հայրապետյանը, Ժ.Դավթյանը, Լ.Մովսիսյանը, Ա.Էյլազյանը, Ա.Մկրտչյանը: Ելույթներն ուղեկցվեցին մտքերի ու կարծիքների ակտիվ փոխանակմամբ:

Անդրանիկի մասին առաջին գիրքը լույս է տեսել իր կենդանության օրոք՝ 1920թ. Կ.Պոլսում: Դա «Զորավար Անդրանիկ եւ իր պատերազմները» օրագրությունն է, որին անդրադարձավ Ժաննա Դավթյանը: Գրքի հեղինակները երկուսն են՝ զորավարի զինակիցներ Լեւոն Թուքունճյանն ու Վահան Թոթովենցը, ովքեր հանդես են եկել մեկ ընդհանուր գրական անունով՝ Արսեն Մարմարյան: Ժ.Դավթյանը ներկայացրեց գրքի ստեղծման հանգամանքները, թեմատիկ ընդգրկումը, Անդրանիկ Օզանյան-Վահան Թոթովենց պատմական նշանակություն ստացած ծանոթության, բարեկամության մանրամասները: Հայտնի է, որ Թոթովենցը 1915-1916թթ. մասնակցել է հայ կամավորական շարժմանը, կռվել Անդրանիկի զորաջոկատում, եղել նրա գրագիրն ու վարել օրագրությունը, որն էլ հիշատակված գրքի մի մասն է կազմում: Թոթովենցը 1917-1918թթ. խմբագրել է նաեւ Անդրանիկի հրատարակած «Հայաստան» թերթը: Թոթովենցի այդ գրվածքը սկզբնապես, իբրեւ թերթոն, հատվածաբար լույս է տեսել Պոլսի «Ժողովրդի ձայնը» օրաթերթում՝ «Դրվագներ հայկական վերջին ճգնաժամեն» խորագրով:

Բանասիրական գիտությունների թեկնածու, համաստեղագետ Լիլիթ Թունյանն անդրադարձավ Համաստեղի «Սպիտակ ձիաւորը» կոթողային վեպին, որի գլխավոր հերոս Մարտիկի նախատիպը ֆիդայական շարժման ականավոր ներկայացուցիչ Անդրանիկն է: Բանախոսը հակիրճ ներկայացրեց վեպը գրելու շարժառիթները, խոսեց պատմականության հարցի շուրջ:

Համաստեղը ներկայացրել է մեր ժողովր-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 6

«Եվգինե» ներկայացում. դերասաններ՝ Արթուր Գաբրիելյանը, Ջեմմա Ադամյանը եւ Արամ Հայրապետյանը

Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնը 80 տարեկան է

Արդեն 80 տարի է, ինչ Այունյաց աշխարհի կենտրոնում՝ Կապանում, ապրում է Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնը: 80 տարի է՝ նրա բեմում կենդանանում են համաշխարհային դրամատուրգիայի գրական հերոսները, 80 տարի է՝ կապանցին թատրոնում շնչում է համաշխարհային արվեստի շնչով:

Վոլտերն ասել է. «Եթե քաղաքը չունի թատրոն, ուրեմն այն մեռած է»: Այս համատեքստում կարող ենք անվարան փաստել. Կապանը՝ որպես քաղաք, իր քաղաքային կենցաղավարությամբ շնչում, ապրում ու հավերժ է...

Այս թատրոնի կամարների ներքո քանի՜-քանի՜ անգամներ դեմ հանդիման կանգնել են չարն ու բարին, կանգնել են զորեղն ու անզորը, գեղեցիկն ու անգեղը... Եվ միշտ հաղթել է իմաստունը... Եվ միշտ հաղթել է թատրոնը, քանզի այն ապրել է 80 տարի:

Թատրոնը հունարենից թարգմանաբար նշանակում է տեսարանների վայր:

Արվեստի այս տեսակն իր մեջ սինթեզում է բոլոր ճյուղերը, եւ արտահայտման միջոցը դերասանն է, ով, կիրառելով թատերական տարբեր հնարներ, գործողությունների միջոցով հանդիսատեսին է հասցնում այն, ինչ վառվել է դրամատուրգի եւ ռեժիսորի մեջ, այն, ինչ հրդեհվում է բեմում, այն, ինչով պետք է բոցավառվի հանդիսատեսը:

Ահա հենց այստեղ է, որ ամեն ինչ պետք է հասցնել հանելուկի, պետք է կերտել այն ամենաազդեցիկ գործիքը, որով կարելի է ներգործել մարդու վրա:

Ներգործեցի՞ր, հաղթեց Իմաստունը, հաղթեց Հանելուկը, հաղթեց այն «խաղալիքը», որով սիրում են խաղալ ե՛ւ մեծերը, ե՛ւ փոքրերը, որով խաղում են մարդու միտքն ու հոգին...

Դափանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնը հիմնվել է 1935թ.՝ նույն ժամանակահատվածում գործող թատերական խմբերի հիման վրա եւ նույն թվականին էլ Ալ.Շիրվանզադեի «Չար ոգի» ներկայացումով առաջին անգամ բարձրացրել վարագույրը: Դերասաններ Վանյա Բալայանը, Անիկ Հարությունյանը, Բագրատ Կիրակոսյանը, Արուսյակ Մարտիրոսյանը, Մխիթար Դավթյանը, Խորեն Սարգսյանը, Ռուբեն Սարգսյանը, Համեստ Ստեփանյանը եւ նկարիչ Արտյուշա Վանյանը՝ ռեժիսոր Սուրեն Միրզոյանի գլխավորությամբ, եղան եւ թատրոնի պատմության մեջ մնացին որպես նահապետներ:

Իրար հաջորդեցին «Պատվի համար», «Նամուս» ներկայացումները: Հայրենական մեծ պատերազմի տարիներին բեմադրվեցին «Ռուզան», «Վագիֆ», «Զոյա»՝ հայրենասիրություն քարոզող եւ ոգեշնչող թեմաներով ներկայացումները:

Պատերազմի ավարտից հետո բեմադրվեցին Շոլոխովի «Երիտասարդ գվարդիա», Շեքսպիրի «Օթելլո», ապա «Պլատոն Կրետչետ», «Ուրիշի երեխան», «Պեպո», «Խաթաբալա» ներկայացումները: 1951թ. Հենրիկ Մալյանն Ա.Օստրովսկու «Եկամտաբեր պաշտոն» ներկայացումով իրականացրեց իր ռեժիսորական դիպլոմային աշխատանքը: 1951թ. էլ թատրոնը ՀԽՍՀ նախարարների խորհրդի որոշումով լուծարվեց, եւ թատրոնի դերասանների մի մասը տեղափոխվեց Գորիսի թատրոն:

1958թ. Դափանի թատրոնը կրկին վերաբացվեց, կոչվեց Զանգեզուրի պետական միջշրջանային թատրոն: Այն նոր շունչ ու ոգի առավ, երբ Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտի մի խումբ շրջանավարտներ (Երվանդ Ղազանչյան, Գալյա Նովենց, Արծրուն Մանուկյան, Գուժ Մանուկյան, Ռաֆայել Քոթանջյան, Ալիկ Քոչարյան եւ այլք) եկան Դափան՝ լրացնելու տնօրեն Ալեքսեյ Հովհաննիսյանի եւ գլխավոր ռեժիսոր Առնոլդ Մարտիրոսյանի ու ռեժիսոր Լեւոն Մարտիրոսյանի ղեկավարած ստեղծագործական կոլեկտիվը: Նրանցից շատերը հետագայում դարձան ճանաչված դերասաններ: Նրանք թատրոնի հիմնական կազմի՝ հանրապետության վաստակավոր արտիստուհի Արաքսյա Գասպարյանի, Վանյա Բալայանի, Անիկ Հարությունյանի, Անիկ Տոնոյանի, Ռուբեն Սարգսյանի հետ կարողացան ստեղծել մի կուռ, ուժեղ կոլեկտիվ: Ապա թատրոն եկան Զուլիետ Կաժոյանը, Բորիս Հովհաննիսյանը, Գորիսի թատրոնից Դափան վերադարձան Արուսյակ Մարտիրոսյանը, Միլիտոս Ղազարյանը, ժակ Ենգիբարյանը: Իրենց բեղմնավոր ստեղծագործական աշխատանքի համար 1977թ. Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստի կոչման արժանացան թատրոնի դերասաններ Վանյա Բալայանը, Միլիտոս Ղազարյանը, Անիկ Հարությունյանը, ժակ Ենգիբարյանը, 1981թ.՝ Արուսյակ Մարտիրոսյանը: Իսկ 1986թ. վաստակավոր արտիստ Միլիտոս Ղազարյանն արժանացավ ժողովրդական արտիստի կոչման:

Այդ ժամանակներից սկսած՝ թատրոնը տարեցտարի հարստացնում էր իր խաղացանկը նոր ու փայլուն ներկայացումներով՝ «Նույն հարկի տակ», «Արամբի», «Քո ժպիտը միլիոն արժե», «Եզոպոս», «Սոս եւ Վարդիթեր», «Սեր եւ խարդավանք», «Մորգանի խնամին», «Պատվի համար», «Բոռ», «Երկու տիրոջ ծառա», «Մխիթար Սպարապետ», «Քանդած օջախ», «Վարազդատ», «Դպրոցական կատակերգություն», «Ռուզան», «Պաղտասար աղբար», «Կապկազ-թամաշա», «Բախտավոր մարդիկ», «Ախ, ներվեր, ներվեր», «Խելագարի հիշատակարանը», «Միրհավ», «Դռնփակ», «Քաջ Նազար», «Գնա մեռի, արի սիրեմ», «Տաքսի, տաքսի», «Երազանքների տունը» եւ այլն:

Թատրոնի խմբի հետ տարբեր տարիներ հյուրախաղերով հանդես են եկել մեծն Վահրամ Փափազյանը («Օթելլո»), Հրաչյա Ներսիսյանը («Նամուս»), Ավետ Ավետիսյանը («Պատվի համար»), 1963թ. թատրոնի կոլեկտիվի հետ «Ժայռը» ներկայացումով հանդես եկավ Գուրգեն Ջանիբեկյանը, 1983թ. Հ.Պարոնյանի «Պաղտասար աղբար» ներկայացման մեջ Պաղտասարի դերով հանդես եկավ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Միհեր Մկրտչյանը, 1986թ. Ժ.Անանյանի «Տաքսի, տաքսի» ներկայացման մեջ՝ վաստակավոր արտիստ Արմեն Խոստիկյանը:

1969թ. Հ.Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված փառատոնին թատրոնի «Քեֆ անողին քեֆ չի պակսի» ներկայացումն արժանացավ փառատոնի երրորդ մրցանակին:

Ե.Չարենցի «Կապկազ-Թամաշա» ներկայացումը 1986թ. արժանացավ Հայաստանի լենինյան կոմունիստական երիտասարդական միության (ՀԼԿԵՄ) մրցանակին: Այս ներկայացումը խաղացվեց նաեւ Մոսկվայում՝ Վ.Մայակովսկու անվան թատրոնում:

Թատրոնի պատմության մեջ իրենց լուսավոր հետքն են թողել ռեժիսորներ Սուրեն Միրզոյանը, Լեւոն Մարտիրոսյանը, Երվանդ Ղազանչյանը, Զեբիկ Զախարյանը, Գեւորգ Գեւորգյանը, Նոդիա Բաղդասարյանը, Սամվել Գայամյանը, Հակոբ Ղազանչյանը:

1990-ական թվականներից հետո սկսված շուկայական հարաբերությունների, ապա մեզ պարտադրված պատերազմի պայմաններում անգամ թատրոնը կարողացավ դիմակայել իրեն հասած փորձություններին: Նա լծվեց գոյատեւման, ազգի ինքնահաստատման համար մղվող պայքարի գործին: Ելույթներով հանդես եկավ զորամասերում, խրամատներում, առաջավոր գծում: Թատրոնը ստեղծեց իր պաշտպանության ջոկատը, մասնակցեց մարտերին, զոհեր տվեց, բայց ապրեց եւ ապրեցրեց, շունչ ու ոգի տվեց ժողովրդին:

Պատերազմի ավարտից հետո թատրոնը կրկին լծվեց իր խաղաղ, ստեղծագործ աշխատանքին: Աշխատելով օտար հարկերի տակ՝ ստեղծեց ներկայացումներ, որոնք սիրով ընդունվեցին հանդիսատեսի կողմից, մասնակցեց փառատոնների՝ արժանանալով մրցանակների:

Բեմադրվեցին Պ.Սեւակի «Եռաձայն պատարագ», Ա.Բակունցի «Միրհավ», Ս.Խալաթյանի «40 օր համբառնալուց առաջ», Կ.Եղիազարյանի «Նժդեհ», Գոգոլի «Խելագարի հիշատակարանը», Ժ.Հարությունյանի «Բախտավոր մարդիկ», ժան Պոլ-Սարտրի «Երեքը դժոխքում», Ա.Պապայանի «Գնա մեռի, արի սիրեմ», Մաշադուի «Բրազիլիայի գանձը» եւ այլ ներկայացումներ:

Երկարամյա բեղմնավոր աշխատանքի համար թատրոնի տնօրեն Կամո Արզումանյանը եւ ռեժիսոր Վազգեն Սարգսյանն արժանացան Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստի կոչման, Կամո Արզումանյանը եւ դերասանուհի Նատալյա Բաղդասարյանը՝ «Մովսես Խորենացի» մեդալի, իսկ Վազգեն Սարգսյանը՝ Թատերական գործիչների միության «Արտավազդ» մրցանակի եւ հանրապետության մշակույթի նախարարության «Ոսկե մեդալ»-ին, Արտավազդ Գրիգորյանը՝ Թատերական գործիչների միության «Ոսկե մեդալ»-ին:

Թատրոնը մշտապես մասնակցում է հանրապետությունում կազմակերպվող թատերական փառատոներին եւ արժանանում պատվոգրերի եւ շնորհակալագրերի: Կապանի թատրոնն իր գոյության ընթացքում երբեք իր սեփական շենքը չի ունեցել եւ 2005թ. ստացավ իր հիմնական շենքը՝ քաղաքի նախկին «Սյունիք» կինոթատրոնի շենքը, որը հիմնովին վերանորոգվելուց հետո 2009թ իր դռները բացեց հանդիսատեսի առջեւ եւ արդեն իր սեփական տանը շարունակում է բուռն ստեղծագործական աշխատանքը:

Այսօր էլ թատրոնը շարունակում է ծաղկել եւ գրանցել նորանոր հաջողություններ ոչ միայն իր տարեգրքում, այլ նաեւ այն քաղաքի, որի քաղաքակրթմանը կոչված է ծառայելու ինքը: Արդեն 25 տարի է՝ կոլեկտիվը ղեկավարում է թատրոնի նվիրյալ, անխոնջ մշակ, Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստ, «Մովսես Խորենացի» մեդալակիր Կամո Արզումանյանը: Նրան բաժին ընկավ թատրոնի պատմության վատագույն շրջանը՝ պատերազմ, անտուն, անօթեւան դեգերումներ, սոցիալական դժվարագույն շրջան: Բայց տնօրենի համառ ջանքերի շնորհիվ թատրոնը հաղթահարեց փորձություններն ու ամուր կանգնած՝ առաջ է ընթանում: Հանրապետական փառատոների մրցանակների եւ բազմաթիվ պարգեւների է արժանանում Շիրվանզադեի թատրոնը, ստեղծում մնայուն գեղագիտական արժեքներ՝ հարստացնելով Սյունիքի արվեստի էջերը:

80-ամյա այս թատրոնը նաեւ Կապանի այցեքարտն է մայրաքաղաքում եւ ամբողջ հանրապետությունում, այն ոչ միայն մշակութային օջախ է Կապանի համար, այլեւ պատվո դեսպան, որով Կապանը ներկայանում է հանրապետությունում:

Թատրոնի նորագույն շրջանի ձեռքբերումները բազմաթիվ են եւ անկարելի է տեղավորել մեկ հոդվածում: Բարեգործական ներկայացումներ զորամասերում, ներկայացումներ սահմանամերձ գյուղերում ու քաղաքներում, Արցախում, Երեւանում: Թատրոնում գործում է Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի Կապանի կուրսը, կուրսի ղեկավար՝ պրոֆեսոր, ժողովրդական արտիստ Հրաչյա Գասպարյան: Միայն նախորդ թատերաշրջանի ընթացքում ծնվեց չորս ներկայացում՝ դասական դրամա՝ Ալ.Շիրվանզադե-«Եվգինե», երիտասարդական կոմեդիա՝ Գուրգեն Միքայելյան-«Ամերիկյան խառնաշփոթ», Սամվել Խալաթյան-«Փակուղուց այն կողմ», մանկական ներկայացում՝ Գեւորգ Սարգսյան - «Քարանձավի գաղտնիքը»: Այս օրերին թատրոնում ընթանում են Լ.Մութաֆյանի «Սրճարան Հիշողություն» պիեսի բեմադրական աշխատանքները՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյակին:

Կամո Արզումանյան, թատրոնի տնօրեն

ՕՖԵԼՅԱ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՋԱՔԱՐՅԱՆ. «Մենք սահմանին ապրող մարդիկ ենք եւ իրավունք չունենք թույլ լինել...»

«Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է Ագարակի քաղաքապետը

Տեղական ինքնակառավարում

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության լուսաբանումը շարունակում է մնալ «Սյունյաց երկրի» ուշադրության կենտրոնում՝ նկատի ունենալով, որ իշխանության բոլոր օղակների մեջ հենց ՏԻՄ-ն է ամենամոտը կանգնած բնակչությանը: Ագարակի դեպքում, սակայն, մեզ հետաքրքրող այլ հարցեր եւս կան: Նախ՝ վերջին ամիսներին այդ տարածաշրջանում նույնպես տեղի ունեցան գործող անձանց փոփոխություններ՝ հայկական եւ ռուսական զորամասերի հրամանատարների, «Ագարակի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի: Իսկ յուրաքանչյուր ՏԻՄ-ի գործունեության հաջողությունը պայմանավորված է նաեւ տարածքի հիմնական սուբյեկտների հետ փոխհամագործակցությամբ: Ագարակի պարագայում հատկապես, քանի որ քաղաքաստեղծ ձեռնարկությունը, այնուամենայնիվ, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունն է: Բացի դրանից՝ տարեցտարի զարգացող Ագարակում, այդ ամենով հանդերձ, առկա են մի շարք հիմնախնդիրներ եւ լուծում պահանջող հարցեր: Դրանք քննարկելու եւ լուսաբանելու նպատակով էլ մարտի 27-ին հանդիպեցինք Ագարակի քաղաքային համայնքի ղեկավար Մխիթար Զաքարյանի հետ:

– Պարոն Զաքարյան, նախ ընդունեք մեր շնորհավորանքները. մի քանի օր առաջ զույգ զավակ եք ունեցել՝ տղա եւ աղջիկ: Արդեն չորս զավակի հայր եք...

– Շնորհակալ եմ շնորհավորանքի համար: Կցանկանայի, որ չորս երեխա ունենալը յուրաքանչյուր ընտանիքի համար լիներ միջին վիճակագրական ցուցանիշ, ոչ թե համարվեր հաջողություն...

– Ամեն մի երեխայի ծնունդ, ակամա, հիշեցնում է տարածաշրջանի ոչ բարվոք դեմոգրաֆիկ վիճակը: Սոցիալական տեսակետից համեմատաբար ապահով Ագարակում էլ, որքանով տեղյակ ենք, ժողովրդագրական վիճակի հարցում 2014-ին դրական միտում չնկատվեց:

– Այդ ոլորտում բացթողման շտկումը, ըստ էության, տասնամյակների հետ է կապված: Այսպես ձեւակերպեմ միտքս. սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքում ծագած խնդիրները համարում եմ ժամանակավոր: Տնտեսագիտության մեջ կան այսպիսի ձեւակերպումներ՝ սպառվող-վերականգնվող, սպառվող-չվերականգնվող ռեսուրսներ: Դեմոգրաֆիական ոլորտում բացթողումը, թերությունը չվերականգնվող են տեսանելի ապագայում: Մեր ժողովրդի, մեր պետության համար ներկայիս ամենամեծ խնդիրը ժողովրդագրության ոլորտում դինամիկ աճ ապահովելն է, այսինքն՝ այնպիսի պայմանների ստեղծումը, որ ընտանիքները ձեռնպահ չմնան շատ զավակներ ունենալուց: Սա գլոբալ խնդիր է, որով պայմանավորված է մեր ազգի առաջընթացը: Նաեւ ինչոր տեղ դժվար է հասկանալ, որ սոցիալական ամենալուրջ գործոնով՝ զբաղվածության խնդրով, Ագարակն այսօր հանրապետությունում առաջին տեղերում է, բայց համայնքում ծնելիության ցուցանիշը հետընթաց է ապրում: 2014 թվականին 50 երեխա է ծնվել, նախորդ տարում՝ 46, այ 2011 թվականին 90 երեխա է լույս աշխարհ եկել: Ուրեմն լուրջ ուսումնասիրության խնդիր կա, հարցի լուծումը միայն սոցիալական ոլորտում չպիտի փնտրել:

– Առաջին երկու հարցից է բխում մեր հաջորդ հարցը: Մարզի լավագույն նախակրթարաններից մեկը, անշուշտ, Ագարակում է: Բայց, ըստ մեր ունեցած տեղեկության, նախադպրոցական տարիքի ոչ բոլոր երեխաներն են ընդգրկված մանկապարտեզում: Այդ տարիքի երեխաների՝ մանկապարտեզում ընդգրկվելու խնդիրն ինչպե՞ս է լուծվում համայնքում:

– Այնքան էլ այդպես չէ: Համայնքի փոքրահասակ երեխաները համարյա 100 տոկոսով ընդգրկված են նախակրթարանում: Նախ պարտադիր պայման է, որ հինգ տարեկանները պետք է մանկապարտեզ հաճախեն: Դրա ապահովումը համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների մեջ է մտնում: Երեք եւ չորս տարեկանների հաճախելիությունը համայնքում երեւի 97-98 տոկոս է: Որտեղի՞ց գիտեմ: Երբ Ամանորի նվերներ էինք հանձնում, երեք տարեկան վեց երեխայի նվերն ենք միայն տուն ուղարկել: Բարձր հաճախելիությունը նաեւ մանկապարտեզի բարենպաստ հարմարություններով է պայմանավորված: Բոլորն են ձգտում իրենց երեխաներին մանկապարտեզ ուղարկել:

– Մեր նախորդ զրույցի ժամանակ ասացիք, որ հարեւան համայնքներից էլ են երեխաներ հաճախում Ագարակի մանկապարտեզ:

– Նախակրթարանի սաներից չորսը Մեղրուց է՝ կապված հանգամանքի հետ, որ նրանց ծնողներն Ագարակում են աշխատում: Բայց հիմա խնդիր է դրված՝ Ագարակի հաշվառում չունեցողներին, բացառությամբ զինվորականության երեխաների, չընդունել: Ստիպված ենք այդ քայլին դիմել: Բանն այն է, որ մեկ երեխայի վարձը հինգ հազար դրամ է, իսկ իրականում մեկ երեխայի համար արված ծախսը 18-20 հազար դրամ է: Շատ կու-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 4

Նոր դպրական հայց «Սյունյաց երկրի» հրապարակման առիթով

Ժամանակներ

Այդ ողորմելի հայցի հեղինակը մեր օրերի հակահերոս Հրաչ Զաբրայանն է, իսկ վիճարկվող հոդվածը՝ ճանաչված լեռնագործ-ճարտարագետ Սամվել Գասպարյանի հեղինակած նամակն է՝ ուղղված Սամվել Ալեքսանյանին, որը ս.թ. փետրվարի 19-ին հրապարակվել է «Սյունյաց երկրի» կայքում, իսկ փետրվարի 28-ին՝ թերթի տպագիր տարբերակում:

Ստորեւ վերահրատարակում ենք Սամվել Գասպարյանի նամակը Սամվել Ալեքսանյանին: Իսկ վերջինիս՝ Հրաչ Զաբրայանի հայցի վերաբերյալ առարկությունները կներկայացնենք թերթի առաջիկա համարներից մեկում:

Редактору газеты “Сюняц еркир”

Уважаемый С. Алексанян!

Ознакомившись со статьей М. Мелкумян от 09.02.2015 г. я решил мой ответ Г. Джабраяну высылать Вам. Может быть статья написана немного эмоционально, не в стиле журналиста. Прочтите, пожалуйста, до конца и тогда решайте, что с ней делать. Если имеет смысл, отредактируйте и напечатайте ее, нет – выбросьте.

Очередной раз открывая пресс-конференцию с представителями СМИ и общественности Г. Джабраян заявил, что прошедший год был неблагоприятным и убыточным для предприятия, поэтому им пришлось отказаться от многих социальных и инвестиционных программ. Далее в том же ключе: «2014-й был довольно тяжелым и план производства был выполнен на 70%, а реализация продукции всего на 60%» отметив, что причиной невыполнения плана явилась неправильная организация подготовительных (нахапатрастакан) работ. Один словесный понос! Послушай клоун, я напомню тебе что на пресс-конференции два года назад я высказался о непрофессионализме твоей команды, обосновав это приведенными тобой же неудовлетворительными результатами их работы . По итогам работы в 2013 году ты снова твердил о великолепной команде, которая опять провалила выполнение плановых показателей, а в интервью М.Мелкумян, честно признавая провал планов 2014 года, ты вновь «уверен в великолепных (лава-гуйн) капанских специалистах, которым нужно время, чтобы направить работу предприятия в нужное русло». Вот что я скажу, провалы по работе это исключительно твоя вина! Ты уже четыре года директор (англ. direct-направление) и руководитель коллектива, обязанного по правильному вести коллектив к решению поставленной цели. Что будет если симфонический оркестр будет играть без дирижера?... Абсолютное отсутствие аналитического мышления, слабые профессиональные знания, руководство коллективом, основанное на эмоциях и лживом патриотизме, то есть никакие деловые качества, подразумевают для тебя лишь одну должность для работы - должность менеджера по «организации корпоративных вечеров», чем ты и прославился по известным широкой публике еженедельным дегустациям со своей командой дорогого спиртного в различных питейных заведениях города.

Неоспорим факт, что со дня передачи месторождения в аренду иностранцам план производства никогда не выполнялся, несмотря на хорошую оснащенность производства современным горным оборудованием. И совсем непонятно как можно все время твердить об убыточности месторождения и продолжать его разработку. Отсюда можно сделать вывод, что добыча руды экономически оправдана,

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 7

Սիսիանում նշվեց Աշոտ Նավասարդյանի 65-ամյակը

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

դա չազդեց իր գործի վրա: Կարծում եմ՝ բոլոր սյունեցիներս հպարտ ենք, որ ունենք Աշոտ Նավասարդյանի նման հերոս զավակ», – նշեց Սյունքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը:

Ազգային ժողովի փոխնախագահ Հերմինե Նաղդալյանի խոսքով՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունը Աշոտ Նավասարդյանի ղեկավարությամբ բավական մեծ, պատասխանատու ու ծանր ճանապարհ է անցել՝ նախեւառաջ իր խոսքն ասելով անկախության պայքարում, պետականության հիմնադրման ու կայացման, այնուհետեւ ազգային բանակի հիմնաքար Անկախության բանակի ստեղծման գործում: **«Անչափ համեստ մարդ էր,** – հիշում է ԱԺ փոխնախագահը: – **Երբեւիցե կողքով անցնելիս չէիր կարող պատկերացնել, որ այդ համեստության եւ հանգստության տեր մարդու հոգում այդքան մեծ ուժ կա, այդքան կամք կա, այդքան հզոր գաղափարներ կան, այդ գաղափարներին այդքան նվիրվածություն կա եւ այդքան խիզախություն կա՝ պայքարելու այդ գաղափարների համար: Երբ արդեն անկախ Հայաստանի ԱԺ պատգամավոր էինք, եւ մեր օրենսդիր մարմնում հարցեր էինք քննարկում, երբեւիցե իմ հիշողությունից չեն ջնջվի այն ըմբոստ ու պահանջկոտ նախադասությունները՝ ուղղված բոլորին, իր ընկերներին. «Մենք այսպես չենք երազել, մենք պիտի գտնենք ճիշտ ձեւը մեր երազած Հայաստանը կառուցելու համար»: Ես կարծում եմ, որ սա ոչ միայն ժառանգություն է իր կուսակից ընկերներին, սա նաեւ պատասխանատվություն է, Աշոտի կողմից պահանջ ու պարտադրանք»:**

Չնայած իր անցած դժվարին ճանապարհին՝ Աշոտ Նավասարդյանը երբեք չդավաճանեց իր գլխավոր՝ ազատ, անկախ ու միացյալ Հայաստանի կերտման գաղափարին:

«Աշոտ Նավասարդյանն ապրեց ընդամենը 47 տարի, բայց նրա գաղափարներն առ այսօր ՀՀԿ գաղափարախոսության հիմքում են», – ընդգծեցին կուսակից ընկերները:

ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՉԱՔԱՐՅԱՆ. «Մենք սահմանին ապրող մարդիկ ենք եւ իրավունք չունենք թույլ լինել...»

«Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է Ագարակի քաղաքապետը

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 3

զենայի, որ համայնքում երեխաներն այնքան շատանային, որ մահճակալները չբավականացնեին բոլոր երեխաներին ընդունելու համար:

– Այս տարածաշրջանում կան հարցեր, որոնց վերաբերյալ Ձեր կարծիքը տարբերվում է բնակչության մի մասի տեսակետից: Առաջին հայացքից դա նորմալ է, նույնիսկ ողջունելի: Բայց երբ խոսքն առնչվում է մեր հոգեւոր-մշակութային արժեքներին, ապա Ձեր յուրօրինակ դիրքորոշումն առնվազն հիմնավորման կարիք ունի: Նման հարցերից մի քանիսի մասին կուզեիք խոսել:

Նախ՝ Ագարակ գյուղի (Հիգերակի) եկեղեցու մասին: 17-րդ դարում կառուցված սբ Ամենափրկիչ եկեղեցու հարցը շարունակում է մնալ օդում կախված: Իսկ Դուք ուզում եք, որ Ագարակ քաղաքում եւս լինի Աստծո տաճար, եւ դա գովելի է, բայց ինչո՞ւ Հիգերակի սբ Ամենափրկիչը քանդելու եւ քաղաքում վերաշինելու ճանապարհով: Ի՞նչ ընթացքի մեջ է այդ հարցը, որքանով հիշում ենք, երկու տարի առաջ կառավարությունն այդ նպատակով 12 մլն դրամ է հատկացրել: Ինչ-որ մարդիկ էլ եկան, կիսատ-պռատ պեղումներ արեցին, քանդեցին ու գնացին...

– Բազմիցս ենք անդրադարձել այդ խնդրին: Ցավոք սրտի, կապված կոմբինատի ֆինանսական-տնտեսական դժվարությունների հետ, այդ խնդրում ոչ մի դրական տեղաշարժ չկա: Թեպետ 2012 թվականին կազմվել էին եկեղեցու տեղափոխման նախագծանախահաշվային փաստաթղթերը, ինչի համար կառավարությունը մշակույթի նախարարությանը հատկացրել էր 12 մլն դրամ: Եկեղեցու տեղափոխման եւ Ագարակ քաղաքում կառուցման նպատակով կոմբինատը խոստացել էր տրամադրել 400 հազար դոլար: Նման գումար չէր կարող տրամադրել ո՛չ քաղաքապետարանը, ո՛չ էլ հնարավոր էր հավաքել հանգանակության միջոցով: Ագարակ քաղաքը չունի դրսում կայացած գործարար-բարեգործներ, իսկ, որքանով տեսնում ենք, Հայաստանում եկեղեցաշինությունը հիմնականում իրականացվում է դրսում ապրող բարեգործների օժանդակությամբ: Օրինակներ շատ կարելի է բերել հենց միայն մեր մարզի կտրվածքով: Մենք այդ աղբյուրը չունենք, չգիտեմ՝ դժբախտաբա՞ր, թե՞ բարեբախտաբար:

Ինչ-որ տեղ խորհրդանշական եմ համարում եկեղեցին Ագարակ «տեղափոխելը»: Համայնքում է գտնվում նաեւ Մեծ հայրենականում ընկած հիգերակ-ագարակցիների հիշատակը հավերժացնող կոթողը՝ դարձյալ գյուղից տեղափոխված: Եվ ինչ-որ առումով ներկայիս Ագարակը նախկին բնակավայրի իրավահաջորդն է, ուստի այդպես եմ տեսնում հարցի լուծումը: Ագարակում հավատի տաճար ունենալը խորհրդանշական է նաեւ այնքանով, որ մեր քաղաքը գտնվում է ներկայիս քրիստոնեական աշխարհի սահմանագծում: Համայնքը կարելի է համարել քրիստոնեական աշխարհի սահմանադուռ: Սիմվոլիկ է նաեւ այն, որ եկեղեցու կառուցման տեղը նախատեսված է քաղաքի մուտքի մոտ՝ դեպի Արաքսի ափ: Մեր քաղաքաշինական ծրագրերում էլ բնակարանաշինությունն այդ հատվածում պիտի ծավալվի:

– Մեղրի գետի շուրջ երկու-երեք տարի շարունակվող բանավեճում Դուք դարձյալ յուրօրինակ կարծիք ունեիք... Ձեզ հասկանում ենք՝ Ագարակ քաղաքը ոռոգման ջրի կարիք ունի, քաղաքի հենց մուտքից երեւում է, թե երբեմնի այգիների տեղում ինչպիսի ամայություն է առաջացել: Հույս կա՞, որ երբեմնի այգիները, Մեղրի գետի ջուրը համայնքի տարածք հասցնելով, կվերականգնվեն: Եվ, առհասարակ, ո՞ր փուլում է գտնվում Մեղրի գետի ջուրը նաեւ Ագարակ հասցնելու ծրագիրը:

– Օրեր առաջ այդ մասին զրույց ունեցա «Մեղրու ճանապարհների շինարարության եւ շահագործման ձեռնարկություն» ՍՊ ընկերության տնօրեն Ազատ Գասպարյանի հետ, ումից տեղեկացա որոշ մանրամասներ: Մեղրի գետի հետ կապված ծրագիրը երեք փուլից է բաղկացած. Վարդանիձորից Մեղրի գետի ջուրը պիտի հասնի Արաքսի ափ, այնտեղից մի ճյուղը՝ Նռնաձոր, մյուս ճյուղը, որ ծրագրի երրորդ փուլն է, Ագարակ: Այս երրորդ փուլի շինարարության մրցույթ պիտի անցկացվի: Եթե մրցույթը շահեն Մեղրու ճանապարհաշինարարները, մինչեւ աշուն, համոզված եմ, կավարտվի շինարարությունը: Դրանով Մեղրու տարածաշրջանը ոռոգման հզոր ցանց կունենա: Բայց, միեւնույն է, մտահոգություն կա, որ հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներին ջուրը չի բավականացնելու՝ Մեղրի գետի սակավաջրության պատճառով: Ծրագիրը լիարժեք տեսք կստանա, եթե ջուրն ամբարվի: Որքանով տեղեկացել եմ կառավարության միջնաժամկետ ծրագրերից՝ Զվարի մոտ 1,1 մլն խորանարդ մետր տարողությամբ ջրամբար է նախատեսված կառուցել: Նախատեսվում են մի քանի փոքր ջրամբարներ եւս: Եթե ինքնահոս եղանակով ջուրը հասնի Ագարակ, քաղաքի կանաչ տարածությունները կավելանան, եւ նախկին այգիները կվերակենդանանան: Մեղրու տարածաշրջանում ամենաթանկ ապրանքը ջուրն է: Ի դեպ, ջուրը մեզ մոտ թանկ է նաեւ մյուս համայնքների համեմատությամբ:

– ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի որոշմամբ, փաստորեն, տրվեց համայնքների խոշորացման ծրագրի մեկնարկը: Իրականացվում է Տիգրան Սարգսյանի կառավարության՝ դեռեւս 2011թ. նոյեմբերի 10-ին ընդունված հայեցակարգը՝ համայնքների խոշորացման եւ միջհամայնքային միավորումների ձեւավորման վերաբերյալ: Սյունիքի մարզում խոշորացման համար ընտրված չորս համայնքային փնջից մեկը Մեղրու նախկին վարչական շրջանն է: Ըստ հայեցակարգի՝ Մեղրու տարածաշրջանի քաղաքային երկու եւ գյուղական 11 համայնք կմիավորվեն մեկ՝ Մեղրի համայնքի մեջ: Այդ հայեցակարգին դեմ են արտահայտվել Մեղրու տարածաշրջանի գրեթե բոլոր համայնքների ղեկավարները: Առայժմ միայն Դուք եք, որ հայեցակարգը, Մեղրու պարագայում, համարում եք ողջամիտ եւ շահեկան Մեղրի քաղաքի, նաեւ շրջանի գյուղերի համար:

– Չէի ցանկանա համայնքների խոշորացման հարցը քննարկելիս առաջամարտիկի դրոշը վերցնել: Դա ծանր ու պատասխանատու խնդիր է: Պաշտոնավարման ընթացքում միշտ ձգտել եմ կոնկրետ իմ՝ համայնքի ղեկավարի գործառույթներն իրականացնել: Իհարկե, շատերին դուր գալու համար կարելի է ամբոխահաճությամբ զբաղվել եւ հայտարարել, թե սխալ է համայնքների խոշորացումը, որ դա կհանգեցնի աշխատատեղերի կրճատման եւ այլն: Բայց իմ կարծիքից շատ քիչ բան է կախված: Չեմ կարծում, որ համայնքների խոշորացման վերաբերյալ որոշում ընդունողները ցանկանում են ինչ-որ վատ բան անել: Համոզված եմ, որ այդ գործընթացին հաշվարկներ են նախորդել: Իսկ իմ անձնական կարծիքով՝ ոչ միայն ՏԻՄ ոլորտում, այլեւ ընդհանրապես մեր երկրում նման մտածելակերպը հետխորհրդային սինդրոմի դրսեւորում է: Այսօր ամբողջ աշխարհում ռեսուրսները կենտրոնացվում են, դրանց նպատակային օգտագործման խնդիր է դրվում, իսկ մենք մնացել ենք հին մտածելակերպի շրջանակի մեջ: Այսպես ձեւակերպեմ միտքս. ունենք ահռելի քանակությամբ որոշում ընդունողներ ու ղեկավարներ եւ այդ որոշումներն աղետալիորեն սակավ իրականացնողներ: Ինքս իմ աշխատանքում թերբեռնվածություն եմ տեսնում: Մեկ մանկապարտեզի, կոմունալ տնտեսության, արվեստի դպրոցի ու մշակույթի կենտրոնի աշխատանքները համակարգելու համար մի քաղաքապետը ճոխություն է: Լուրջ փոփոխություններ պիտի իրականացվեն: Ամենամեծ ռիսկն այս վիճակը պահպանելն է: Թող յուրաքանչյուր համայնքի ղեկավար անկեղծորեն խոստովանի, թե ներկայիս կարգավիճակով իր համայնքը զարգանո՞ւմ է, թե՞ ոչ: Եկեք դիտարկենք մեր գյուղերի վիճակը, ժողովրդագրական պատկերը: Ուրախացնող ոչ մի բան չկա... Մինչդեռ համայնքների խոշորացման ծրագիրն իր մեջ զարգացման հեռանկար է պարունակում եւ բնակավայրերի հավասարաչափ զարգացման հնարավորություն:

– Եթե Մեղրու երբեմնի վարչական շրջանի տարածքը միավորվի մի համայնքի մեջ, ապա հանրաքվեից անմիջապես հետո կհաջորդի համայնքի ղեկավարի ընտրություն, եւ Մխիթար Զաքարյանը նոր համայնքի ղեկավարի հավանական թեկնածուներից մեկն է:

– Դեռ վաղ է այդ մասին խոսելը: Բայց, անկեղծ եմ ասում, ոչ մի անգամ հանրային գործունեության մեջ անձնական շահով չեմ առաջնորդվել: Իսկապես, մի քիչ լուրջ չէ հիմա այդ մասին խոսելը: Բայց որ այս վիճակն անհապաղ շտկելու պահանջ կա, դա միանշանակ է: Տեսեք գյուղերի վիճակը: Ահավոր է, շատ մեծ վտանգ եմ տեսնում: Ագարակի ժողովրդագրական պատկերն է մեզ անհանգստացնում, բա գյուղե՞րը: Համակարգային փոփոխություն պիտի լինի: Ամենառիսկային վիճակը ներկայիս ստատուս-քվոն է: Նաեւ չեմ անտեսում հանգամանքը, որ հասարակական կարծիքը հաշվի առնեն, ժողովրդի տրամադրությունը շոշափեն: Ամփոփեմ միտքս. Մեղրու տարածաշրջանը շատ մեծ կորուստ կրեց կառավարության պիլոտային ծրագրի մեջ չներգրավվելով: Ուզում եմ մի հանգամանքի վրա եւս ուշադրություն հրավիրել. Մեղրու տարածաշրջանում ամենակենսունակ համայնքն Ագարակն է: Համայնքների խոշորացման ծրագրով վարչական կենտրոն է ընտրված Մեղրի քաղաքը, որը ճիշտ եմ համարում՝ թե իր աշխարհագրական դիրքով, թե պատմական առումով, սոցիալ-տնտեսական ատրիբուտներով, բայց նաեւ հարկ եմ համարում նշել, որ Ագարակը, որ իր համայնքի կազմում ունի հզոր պղնձամոլիբդենային կոմբինատ, զինվորական գունդ, մաքսակետ, ինքնուրույն զարգացման իր ռեսուրսներն ունի: Մեղրուն այդ առումով լոկոմոտիվ է անհրաժեշտ, քաշող ուժ է պետք: Իսկ քանի որ Մեղրին պիտի լինի համայնքային նոր միավորի վարչական կենտրոնը, Ագարակը զրկվելու է իր, այսպես ասած, սեփական ռեսուրսները տնօրինելու հնարավորությունից, աշխատակազմից... Ասել է թե՝ Ագարակը կորցնում է իր դիրքը: Եվ ուրեմն՝ ինչպե՞ս հասկանալ՝ Ագարակն ըմբռնումով է մոտենում խոշորացմանը, իսկ մյուս համայնքները՝ ոչ: Դա մտածելու տեղիք է տալիս:

– Մեր աչքի առաջ Ագարակ քաղաքը փոխվում եւ նորացվում է՝ նոր կառույցներ, բարեկարգ փողոցներ, շինարարություն... Վերջին ուշագրավ կառույցը մաքսային պահեստարանն է՝ տերմինալը: Մի փոքր պարզաբանեք, խնդրեմ, դրա դերն ու նշանակությունը:

– Մաքսային տերմինալը 15 ամսվա ընթացքում պիտի անցնի վերագրանցման փուլ եւ կունենա նույն կարգավիճակը, ինչ Մոսկվայի, Բելառուսի, Ղազախստանի համապատասխան ծառայությունները: Մեր հանրապետություն մուտք գործող բեռը պիտի մաքսազերծվի տերմինալներում: Այսօրվա գործող օրենքով՝ բեռնատարը պիտի հասներ Կապան, այդտեղի տերմինալում մաքսազերծվեր եւ ապա հետ գար Ագարակ: Կարելի է փաստել, որ Ագարակի տերմինալի գործարկումով տարածաշրջանում բիզնեսի սպասարկման նոր ոլորտ է ավելացել, տասը աշխատատեղ է բացվել՝ եւս հինգն ավելանալու հեռանկարով, դյուրացվելու է ներմուծման եւ արտահանման գործընթացը: Ընկերությունը կոչվում է «Ագարակի տերմինալ», եւ Ագարակ անունն օգտագործելու համար համայնքի բյուջեին գումար է վճարում. դա էլ փոքրիկ հաջողություն եմ համարում:

– Ագարակի արվեստի դպրոցը, կարծես, վերջնական տեսքի է գալիս, փոքր-ինչ այդ մասին կուզեինք իմանալ, որովհետեւ դրա վերաշահագործումը եւս հոգեւոր իրադարձություն է համայնքի կյանքում: Ե՞րբ վերջնականապես արվեստի դպրոցը կբացի իր դռները:

– Այս պահին կատարողական ակտն ստորագրվում է: Մայիսի 1-ին, ամենայն հավանականությամբ, կլինի վերաշինված-վերակառուցված դպրոցի բացումը: Պատեհ առիթն ուզում եմ բաց չթողնել՝ շնորհակալություն հայտնելու Սյունիքի մարզպետին: Հանրապետության նախագահի Ագարակ կատարած այցի ժամանակ ագարակցիները բարձրացրեցին այդ խնդիրը, Սյունիքի մարզպետը խոստացավ, որ իր ուշադրության կենտրոնում կլինի շինարարության ընթացքը, այսօր դպրոցի հիմնանորոգումն այլեւս կատարված փաստ է: Ունենալու ենք արվեստի մի հիանալի կրթօջախ: Ասեմ, որ դպրոցականը հաճախելով այդպիսի հաստատություն, իր քաղաքն ավելի շատ է սիրելու: Քաղաքապետարանն այլ ռեսուրսներ ներգրավելով, գործն ավարտին է հասցրել: Այնքան հարմարավետ, բարետես է դարձել դպրոցը, որ որոշեցինք կառույցի շրջակայքը նույնպես ներդաշնակ դարձնել: Շինաշխատանքներն արժեցել են 109 մլն դրամ, որ իրականացվել է սոցներդրումների հիմնադրամի միջոցներով, իսկ շրջակայքի բարեկարգումը՝ կանգառով, կանաչապատումով՝ 15 մլն դրամ՝ համայնքի միջոցներով: Այդպիսով նաեւ Ագարակի հրապարակի մի կողմը լիովին տեսքի է գալիս, հետո պիտի մտածենք մյուս երեք կողմերը եւս պատշաճ տեսքի բերելու համար: Նաեւ դպրոցի դիմացը կտեղադրվի հինգ հենասյուն՝ գեղեցիկ լուսատուներով: Դա թանկ հաճույք է, բայց մտածեցինք, որ այդ քայլին պիտի դիմենք, որ ակնահաճո լինի արվեստի դպրոցի շրջակայքը եւս:

Ինչ վերաբերում է համայնքապետարանի քաղաքաշինական ծրագրերին, նախատեսում ենք Ագարակ-մաքսակետ ճանապարհահատվածն ասֆալտով փողոցային լուսավորությամբ: Համայնքի համար, եթե խորհրդային ժամանակների տերմինաբանությամբ արտահայտվենք, հարվածային կառույց է համարվում նախկին կաթսայատան վերաշինումը, վերակառուցումը եւ վերածումն ըմբշամարտի մարզադահլիճի:

– Վերջերս Ագարակում տեղի ունեցավ սպորտային աննախադեպ իրադարձություն՝ հայ-իրանական մարզական խաղեր: Կխնդրեինք այս մասին փոքր-ինչ հանգամանալից ներկայացնել, քանզի դա նախադեպը չուներ ագարակյան կյանքում:

– Ես դա առաջին ծիլերն եմ համարում համայնքի մարզական կյանքում եւ փաստը շատ եմ կարեւորում: Ագարակում ըմբշամարտ մարզաձեւի կայացումն իրողություն կարելի է համարել: Ըմբշամարտի պարապմունքներում ընդգրկված է 55-60 պատանի մարզիկ: Հաջողություններն առկա են, արդեն ագարակցի ըմբշամարտիկները երկու անգամ միջազգային մրցման են մասնակցել, նախ՝ Բաթումում, ապա՝ Իրանի Մազանդարյան նահանգում, որը, ինչպես հայտնի է, ըմբշամարտի կենտրոն է աշխարհում: Մեր մարզիկները հանդես են եկել Ագարակին մերձակա-սահմանակից Զուլֆա քաղաքում, իսկ վերջերս իրանցի մարզիկներն էին հյուրընկալվել Ագարակում: Ընդհանրապես իրանական այդ քաղաքի հետ սերտ համագործակցության ծրագրեր ունենք, մի քիչ էլ իրադարձություններից առաջ ընկնելով՝ հայտնեմ, որ քույր քաղաքներ լինելու փաստաթղթի մշակման վրա ենք աշխատում: Անկեղծ ասած՝ փոքր-ինչ էլ նախանձում եմ. Զուլֆայի բնակչությունը գրեթե Կապան քաղաքի բնակչության չափ է, բայց տնտեսությամբ, քաղաքային ենթակառուցվածքների զարգացածությամբ համեմատության եզրեր չկան: Սահմանամերձ այդ քաղաքը, որպեսզի անհրաժեշտ զարգացում ունենա, ազատված է հարկերից: Ինչ վերաբերում է մրցմանը, հրավիրել էինք իրանցիներին, ինչպես նաեւ Քաջարանի, Գորիսի ըմբշամարտի թիմերին: Արդեն իրանական կողմի հրավերը կա, ըստ ամենայնի ավանդույթի հիմք է դրվում, եւ

Առաջիկայում նախատեսում ենք ամսական երկու անգամ այցելել միմյանց (խոսքն ըմբշամարտի թիմի մասին է), որն ազդակ կլինի երկու հարեւան ժողովրդի բարեկամության ամրապնդման, նաեւ սպորտի զարգացման: Ժամանակն է, որ Ագարակն էլ ունենա իր մրցանակակիրն ու չեմպիոնը թե՛ հանրապետական, թե՛ միջազգային կարգի: Այս միտքը մի անգամ էլ եմ հայտնել. մենք սահմանին ապրող մարդիկ ենք եւ իրավունք չունենք թույլ լինել, մեր տղաներն ուժեղ ու մարզված պիտի լինեն, աղջիկներն էլ՝ ավանդապահ ու մարդկային վեհ արժեքներ կրող:

– Տարեսկզբին փոխվեց «Ագարակի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենը, մենք հանդիպել ենք ձեռնարկության նոր ղեկավար Յուրի Բերեզովսկու հետ, քննարկել մի շարք հարցեր, այդ թվում՝ Ագարակ քաղաքով անցնող Կարմեւան գետում ստեղծված վիճակը, որը, ըստ էության, տարիներ շարունակ չի տարբերվում կոյուղուց: Մենք նկատեցինք նրա շահագրգռությունն ու պատրաստակամ վերաբերմունքը քաղաքում շահեկան սոցիալ-տնտեսական քաղաքականություն վարելու հարցում: Կարծում եմ՝ հասցրել եք նոր ղեկավարի հետ համատեղ հետաքրքրություն ներկայացնող հարցեր քննարկել:

– Հանդիպել, ծանոթացել եմ նոր տնօրենի հետ: Բավականին հուսադրող ծրագրեր ունի: Ցավոք սրտի մետաղական բորսայում պղնձի եւ մոլիբդենի գների անկման հետ կապված կոմբինատում այսօր ծանր ֆինանսատնտեսական վիճակ է: Մենք ավելի վատ իրավիճակում ենք եղել 2008-2009 թվականների ֆինանսատնտեսական ճգնաժամի օրերին, բայց պատվով ենք դուրս եկել: Այս օրերին պղնձի եւ մոլիբդենի գների աճ է նկատվում, հուսանք, որ ամեն ինչ իր տեղը կընկնի…

– Վերջին շրջանում փոխվել են նաեւ Ագարակի զորամասի, Մեղրու սահմանապահ ջոկատի հրամանատարները: Նրանք, կարծում ենք, նախկին ավանդույթները շարունակելու ջատագովն են, քանզի զինվորականության եւ քաղաքացիական բնակչության հարաբերություններն այս կողմերում միշտ էլ աչքի են ընկել դրական դրսեւորումներով: Ի վերջո զինվորականությունն Ագարակի անքակտելի մասն է: Այդ առումով ուշագրավ է 2014-ին կառուցված ռազմական ավտոհավաքակայանը: Հիմա էլ, որքանով տեղյակ ենք, նոր շինարարություն է իրականացվում Ագարակում: Կուզեինք ներկայացնարարություն է իրականացվում Ագարակում: Կուզեինք ներկայացնել Ագարակը որպես զինվորականության հանգրվան:

– Որպես համայնքի ղեկավար, պարզապես որպես հայ մարդ, համայնքի բոլոր քայլերին պարտադրված եմ զինվորականի աչքերով նայել: Գնդի նոր հրամանատարը՝ Կարեն Սեդրակյանը, նվիրված անձնավորություն է, կարծում եմ՝ Ձեր ասած զինվորականության եւ քաղաքացիական բնակչության միջեւ հաստատված համերաշխության ավանդույթը շարունակություն կունենա: Ինչ վերաբերում է Ագարակի նոր զորանոցի շինարարությանը, ապա այդ զորանոցում նախատեսվում է տեղավորել Ագարակի գնդի Մեղրիում տեղաբաշխված հրետանու ստորաբաժանումը: Նաեւ նոր բնակելի շենք է կառուցվում՝ զինվորականների համար:

– Մխիթար Զաքարյանն այսօր ե՛ւ լավ քաղաքացու, ե՛ւ հաջողակ գործարարի համբավ ունի: Ձեր ընտանիքին պատկանող ընկերություններից մեկը՝ «Վիլա-օյլը», մի քանի տարի է, ինչ կայուն տեղ է զբաղեցնում հանրապետության խոշոր հարկատուների ցանկում: Ճանաչում է ձեռք բերել նաեւ «Վիլա-տրանսը»: Անկեղծ ասած շատերը փորձում են համոզել, որ Մխիթար Զաքարյանը բիզնեսում հաջողության է հասել քաղաքապետ լինելուց հետո, բայց դրանք նաեւ (քաղաքապետ ու գործարար) իրար լրացնող գործոններ կարելի է համարել: Ինչպե՞ս եք մեկտեղում երկու ոլորտները, երեւի դրանք միմյանց նպաստող հանգամանք են եւ ոչ թե խանգարող:

– Նախ՝ մինչեւ համայնքի ղեկավար ընտրվելն իմ ընտանիքը բիզնես է ունեցել եւ չեմ թաքցնում, մեր ընկերությունը խոշոր հարկատուների ցուցակում է եղել: Այս հանգամանքը հպարտորեն եմ նշում, որովհետեւ բիզնես հիմնադրել եւ կայացնելը դյուրին գործ չէ: Այսօրվա դրությամբ այդ բիզնեսը համայնքային կյանքին առնչվում է այնքանով, որ բարեգործություն է անում, Ագարակում բարեգործական ծրագրեր իրականացվելիս հանդես է գալիս որպես դոնոր: Իսկ բարեգործության մասին ընդունված չէ բարձրաձայն խոսել: Ընկերության սեփականատերերն իմ ընտանիքի անդամներն են: Դրա կառավարումն իրականացնում են երիտասարդ ու խոստումնալից կադրեր: Որպես տնտեսագիտության թեկնածու՝ խորհուրդներով օգնում եմ նրանց եւ բոլոր նրանց, ովքեր դրա կարիքն ունեն: Առհասարակ, որպես համայնքի ղեկավար, ինձանից կախված ամեն ինչ անում եմ՝ տարածաշրջանում գործարարությանը նպաստելու համար:

– Մի բան է նկատվում արդեն քանի տարի. որոշ իրանցիներ իրենց նոր տարին՝ Նովրուզը, ցանկանում են Հայաստանում նշել: Դա ինչ-որ չափով անդրադառնո՞ւմ է Ագարակի կյանքի վրա (հյուրանոցային տնտեսություն, առեւտրի աշխուժացում եւ այլն):

– Իրանցի զբոսաշրջիկները հիմնականում մայրաքաղաք են այցելում: Ագարակում շատ աշխատանքներ կան կատարելու՝ նրանց հյուրընկալելու համար: Ցավոք սրտի, բավականաչափ պատրաստ չենք: Անելիքներ շատ կան թե՛ սահմանային կոմունիկացիաների զարգացման, թե՛ հյուրանոցային տնտեսության բարելավման գործում: Սա իմ անձնական կարծիքն է: Իրանցիների այցը, այնուամենայնիվ, անմիջական ազդեցություն է ունենում քաղաքի վրա: Իրանցիները հանրապետություն են մուտք գործում Ագարակի մաքսակետով, որում յուրաքանչյուր աշխուժություն անդրադառնում է համայնքի առօրյա կյանքի վրա: Եվ այդ առումով կարեւորեցինք Ագարակ-մաքսակետ կարճ ճանապարհի կառուցումը:

– Վերջերս շատ սակավ, բայց հետեւողական (ու հատկապես մայրաքաղաքից՝ սյունիքյան ծագումով մեկ-երկու հոգի) փորձում են հայաստանյան հանրությանը հրամցնել Սյունիքի մարզի ղեկավարության, մարզում տիրող իրավիճակի բացասական տեսլականը: Ի՞նչ կասեիք այդ մասին:

– Թող բարձր չհնչի, բայց կուզեի, որ ողջ հանրապետությունում լիներ Սյունիքում տիրող իրավիճակը: Իշխանությունը բոլոր դեպքերում, կարծում եմ, պետք է լինի ուժեղ, իրավիճակին տիրապետող, ժողովրդին առաջնորդող, զարգացմանն աջակցող, կատարողական կարգապահության մեջ օրինակ ծառայող: Այսօր Սյունիքի մարզում ունենք հենց այդպիսի իշխանություն: Եղել եւ մնում եմ կարծիքին, որ Սյունիքի իրավիճակի վերաբերյալ իրավունք ունի արտահայտվելու միայն սյունեցին՝ այստեղ ապրող, այստեղի օդը շնչող: Ովքեր այստեղից տեղափոխվել են, չեմ դատապարտում: Յուրաքանչյուրն ինքն է տնօրինում իր ճակատագիրը, ընտրում իր բնակվելու վայրը: Իհարկե, շատ կարեւոր է այն, թե որտեղ են քո արմատները: Իմ ծնողները Կարմեւան գյուղից են Ագարակ եկել: Բայց այսօր ես ճիշտ չեմ համարում, լինելով Ագարակի համայնքի բնակիչ, Կարմեւանի մասին դատողություններ անել, այդ համայնքի գործերին միջամտել: Դա նույնն է, որ մեկն այստեղ՝ Սյունիքում նստած, Շիրակի մարզի մասին դատողություններ անի:

– Իսկ ինչպե՞ս եք գնահատում Ագարակ քաղաքի բարոյահոգեբանական մթնոլորտը: Երեք-չորս տարի առաջ երբեմն-երբեմն կտրուկ լարվածության դրսեւորումների ականատես եղանք, իսկ հիմա… Եվ, իհարկե, Ձեր ընդդիմության մասին:

– Ընդդիմություն ի հայտ է գալիս նախընտրական շրջանում: Միշտ այն համոզմունքն եմ ունեցել, որ ուժեղ իշխանությունը լինում է ուժեղ ընդդիմության դեպքում: Նույնիսկ վտանգավոր է, երբ ընդդիմությունը բացակայում է, քանզի այն յուրօրինակ զսպաշապիկի դեր է խաղում: Գուցե Ագարակում ընդդիմության բացակայությունը բնակավայրի փոքր լինելու գործոնով է պայմանավորված: Փոքր բնակավայրում շատ բաներ, այդ թվում եւ ընդդիմությունը, անձնականացվում են: Փոքր Ագարակում ընդդիմությունը, որքան նկատել եմ, անձի հանդեպ է դառնում ընդդիմություն: Համենայն դեպս, ինձ թվում է, ագարակցիներն իմ գաղափարներին, մոտեցումներին հավանություն են տալիս: Եվ այն օրը, երբ համոզվեմ, որ ճիշտ չեմ ընկալվում, կամ ժամանակն իմ օգտին չի աշխատում, արժանապատվորեն հեռանալու եմ:

– Պարոն Զաքարյան, բազմիցս Ձեզ հետ զրույց ենք ունեցել եւ միշտ էլ՝ սոցիալ-տնտեսական ու ներքաղաքական լարված իրավիճակներում անգամ, լավատեսություն ենք նկատել ձեր մեջ. ինչո՞վ բացատրել:

– Խորհուրդ կտամ բոլորին ավելի շատ եւ հաճախ շփվել երիտասարդության հետ: Իմ լավատեսության առաջին գրավականը աճող սերունդն է: Պատահում է՝ քննադատում են երիտասարդներին, բայց, անկախ ամեն ինչից, հրաշալի սերունդ է աճում՝ անկախության տարիներին ծնված, պետական մտածողություն կրող, հին կարծրատիպերից ձերբազատված: Առիթ է եղել լինել սահմանապահ զինվորների կողքին, միայն հպարտության զգացում եմ ապրել, պինդ ու հաստատուն են կանգնած մարտական դիրքերում: Եվ այդպիսի սերնդի համար պարտավոր ենք նպաստավոր պայմաններ ստեղծել, որ դրսեւորեն իրենց ունակություններն ու գիտելիքները կյանքում ներդնեն:

– Այսօր Ագարակում շրջելիս հանդիպեցինք ե՛ւ ռուսների, ե՛ւ պարսիկների: Տպավորություն ունենք, որ Ագարակն աստիճանաբար բազմազգ քաղաք է դառնում:

– Երեւույթը ճիշտ եք նկատել. թեպետ նվազ չափով, բայց առկա են այլազգիներ: Ագարակը հիմնադրման ժամանակից բազմազգ քաղաք է եղել, եւ նախադրյալներ կան, որ կվերականգնվեն բազմազգ քաղաքի ավանդույթները, մանավանդ որ դրսից մասնագետներ են հրավիրվում պղնձամոլիբդենային կոմբինատ: Մոտակայքում է գտնվում Մեղրու ռուսական սահմանապահ ջոկատը, որի հետ սերտ շփումներ կան: Ագարակը սահմանակից քաղաք է, եւ հուսով եմ՝ այնքան կզարգանա, որ մի օր իրանցի զբոսաշրջիկներն իրենց հանգիստը, մանավանդ Նովրուզի օրերին, կցանկանան նաեւ Ագարակում անցկացնել: Բացի այդ, քաղաքի տոնի միջոցառումների շրջանակում Բելառուսի քույր քաղաք Սոլիգորսկի պատվիրակությունն այցելում է Ագարակ: Մի խոսքով՝ բազմազգությունը համարում եմ համայնքի հարստություններից մեկը:

Հարցազրույցը՝
ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Քաջարանի բժշկական կենտրոնի վիրահատական բլոկը վերագործարկվեց

Առողջապահություն

Մարտի 27-ին «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում հրավիրվել էր խորհրդակցություն, որի նպատակն էր մարզի առողջապահության ոլորտի պատասխանատուներին ներկայացնել հիվանդանոցում հեպատիտ C-ի վարակի կանխարգելման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները:

Բացման խոսքում Սյունիքի փոխմարզպետ Վաչե Գրիգորյանը նշեց, որ համապատասխան ուսումնասիրություններ են կատարվել մարզի բուժհաստատություններում, եւ հայտնաբերված թերությունների վերացման ու կանխարգելման համար տրվել են համապատասխան հրահանգներ:

Սյունիքի մարզպետարանի առողջապահության ու սոցիալական ապահովության վարչության նորանշանակ պետ Նունե Գեւորգյանը նշեց, որ իրենց հիմնական նպատակն ինչպես հիվանդներին, այնպես էլ բուժանձնակազմին անվտանգ բժշկական ծառայություններ մատուցելն է, որ նախեւառաջ իրականացվում է ներհիվանդանոցային վարակների կանխարգելման միջոցով:

Նունե Գեւորգյանը տեղեկացրեց, որ Քաջարանի բժշկական կենտրոնում մանրամասն հետազոտություններ են անցկացվել ներհիվանդանոցային վարակների կանխարգելման առումով, կենտրոնի տնօրենությունը հսկայական աշխատանք է կատարել արձանագրված թերությունները վերացնելու համար, որոնք հիմնականում առնչվում են տվյալ գործառույթի կատարման մասին գրանցամատյանների բացակայությանը: Նա նաեւ զգուշացրեց մարզի մյուս հիվանդանոցների ղեկավարներին՝ կատարված աշխատանքների մասին գրառումներ կատարել ամենայն մանրամասնությամբ, որովհետեւ, ինչպես փորձը ցույց տվեց, ստեղծված իրավիճակից դուրս գալու հնարավոր տարբերակներից է նաեւ համապատասխան գրանցամատյանների առկայությունը:

Մարզպետարանի ներկայացուցիչն իր զեկույցում ներկայացրեց Հայաստանի Հանրապետությունում ներհիվանդանոցային վարակների կանխարգելման գործընթացը կարգավորող իրավական ակտերը՝ կառավարության համապատասխան որոշումներով:

ՀՀ առողջապահության նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովի ուսումնասիրությունների շնորհիվ բացահայտված թերությունների եւ դրանց շտկման ուղղությամբ իրականացված աշխատանքի մասին մանրամասն զեկուցեց «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բուժական գծով փոխտնօրեն Վիրաբ Մանասյանը: Նա նշեց, որ 2015թ. հունվարին առողջապահության նախարարի հրամանով կազմված հանձնաժողովի եւ ՀՀ ԱՆ առողջապահության պետական տեսչության աշխատակիցների կողմից իրականացվել են ներհիվանդանոցային վարակների կանխարգելման եւ համաճարակային վիճակի ուսումնասիրություններ՝ կապված Քաջարանի բժշկական կենտրոնում արձանագրված հեպատիտ C-ի հետ: Հայտնաբերված թերությունները փուլ առ փուլ, սահմանված ժամկետում վերացվել են, որոնց մասին համապատասխան զեկուցումներ են ներկայացրել նախարարություն: Կենտրոնի ողջ անձնակազմն ունի սանիտարական գրքույկներ, անցել է համապատասխան բուժզննում հեպատիտ C-ի համար, տնօրենությունը որոշել է վիրահատական միջամտություններից առաջ հիվանդների պարտադիր բուժզննման մեջ ներառել նաեւ հեպատիտ C-ի ախտորոշման համապատասխան անալիզ:

Կազմվել են նախամանրէազերծումային եւ մանրէազերծումային, բուժանձնակազմի սուր գործիքների պատահական ծակոցների գրանցամատյաններ, բուժանձնակազմի մանրէազերծումային աշխատանքների որակը ստուգվում է հատուկ ինդիկատորների միջոցով:

Վիրաբ Մանասյանը նշեց նաեւ, որ նման իրավիճակների համար մշակվել է գործողությունների համալիր ծրագիր, ապահովվել է կենտրոնի լվացքատան հոսքայնությունը:

Կենտրոնը հրավիրել է «Մեդիտեք» ընկերության ներկայացուցիչներին՝ իրականացնելու բժշկական սարքավորումների տեխնիկական որակի ստուգումներ եւ ստուգաչափումներ, ինչպես նաեւ պայմանագիր է կնքվելու ամենամյա ստուգաչափումների համար: Պայմանագիր է կնքվել նաեւ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Սյունիքի մասնաճյուղի հետ՝ Քաջարանի բժշկական կենտրոնի հիվանդանոցային բուժօգնության եւ սպասարկման սանիտարամանրէաբանական պլանային լաբորատոր հսկողություն իրականացնելու համար: Մանասյանը նշեց նաեւ, որ «ՀՀ ԱՆ հիվանդությունների վերացման եւ կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ոչ վարակային հիվանդությունների համաճարակաբանության բաժնի պետ Ռոմելա Աբովյանը գործուղվել է հիվանդանոց, եւ նրա օժանդակությամբ ստեղծվել է ներհիվանդանոցային վարակների վերահսկման համալիր ծրագիր: Նմանատիպ համալիր ծրագիր է ստեղծվել նաեւ թափոնների անվտանգ շրջանառության համար. նախատեսվել է առանձին սենյակ թափոնների ընդունման եւ տեսակավորման համար, եւ 48 ժամից ավելի թափոնները հիվանդանոցի տարածքում չեն գտնվում (նշենք, որ հիվանդանոցում գործում է պետական ստանդարտներին համապատասխան թափոնների հեռացման սեպտիկ հոր): Քաջարանի հիվանդանոցում կազմակերպվել են սանիտարահիգիենիկ եւ հակահամաճարակային ռեժիմի պահպանման, բժշկական գործիքների նախամանրէազերծման եւ մանրէազերծման, ներհիվանդանոցային վարակների դեմ պայքարի եւ կանխարգելման, բժշկական գործունեության ժամանակ բուժանձնակազմի մասնագիտական վնասվածքների ժամանակ գործող ընթացակարգի, ձեռքերի մշակման եւ առանձին ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելման մասին դասընթացներ:

«ՀՀ ԱՆ հիվանդությունների վերացման եւ կանխարգելման ազգային կենտրոնի Սյունիքի մասնաճյուղը երեք անգամ վերցրել է բժշկական կենտրոնի բուժգործիքների, օդի եւ շենքի սանիտարահիգիենիկ վիճակի գնահատման համար նմուշառումներ, որոնցում շեղումներ չեն հայտնաբերվել: Սա հիմք է հանդիսացել, որ մենք վերագործակենք վիրահատական հատվածը: Մարտի

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՋ 8

Կլոր սեղան

Անդրանիկի գրական կերպավորումները

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

դի պատմության «փոթորկոտ շրջանի» գեղարվեստական նկարագիրը՝ հենվելով պատմական դեպքերի ու դեմքերի վրա: Լ.Թունյանը վեպը ծրագրային համարեց այն առումով, որ հայի ու հայության առջեւ մեկ անգամ եւս հստակորեն դնում է գոյության միակ ճիշտ ծրագիրը՝ ազատության համար մղվող պայքարում մեր թշնամին ու մեզ հաղթողը մենք ենք՝ տխրահամբավ անմիաբանությամբ: Մերժողական դիրքերից բուռն քննարկում ծավալվեց վեպում Մարտիկի անփառունակ ու անժամանակ մահվան դրվագի շուրջ՝ պայմանավորված հեղինակի քաղաքական կողմնորոշումով, որի հիմքը դաշնակցության կողմից ֆիդայական-պարտիզանական անկազմակերպ շարժումները մերժելու հանգամանքն էր: Համաստեղը ՀՅԴ անդամ էր եւ, ինչ խոսք, պետք է հավատարիմ մնար կուսակցության սկզբունքներին: Բայց չի կարելի նրան մոլի կուսակցական համարել եւ վեպի թերությունների հիմքում տեսնել գրողի դավանանքը, ինչպես խորհրդային գրականագիտությունն է վարվել: Համաստեղը միշտ եղել ու մնացել է հայի ու հայրենիքի երգիչ, հայ մարդ, որի համար Հայաստանն ու հայ ժողովուրդն էին կյանքի միակ չափաձողը: Չնայած Մարտիկի վաղաժամ մահվանը՝ ժողովուրդը, սակայն, հավատով սպասում է նրա հայտնությանն ու առասպելական ուժին: Նա ապրում է մահից հետո էլ՝ իբրեւ ազգային հերոսական ոգու դրսեւորում. այս պարագան հաշվի առնելով թերեւս կարելի է «ներել» գրողի ակնհայտ վրիպումը՝ Մարտիկին «կռվի դաշտից» շուտ հեռացնելը…

Հանգամանալից անդրադարձ եղավ (բանախոս՝ Թ.Մարության) հայ անվանի գրող, ՀՅԴ նշանավոր ներկայացուցիչ, սփյուռքում ճանաչված հասարակական գործիչ Ավետիս Ահարոնյանի՝ Անդրանիկին նվիրված ուշագրավ խոհագրությանը, որը հեղինակը շարադրել է զորավարի մահվան անմիջական ազդեցությամբ՝ խոհազգացական խորունկ դիտարկումներով ու բնութագրումներով կերտելով մեծ հայի ու մեծ զորավարի անզուգական դիմանկարը. մարդ, ում «հնչուն ու խորհրդանիշ անունը դարձել էր ժողովրդական հերոսապատումի ավետարան, մարդ, ով վաղուց ժողովրդի համար դադարել էր անհատ լինելուց, ում գոյությունը լուծված էր մի մեծ ազգային գաղափարի մեջ»: Անդրանիկի հետ Ա.Ահարոնյանը ծանոթացել էր 1904թ. Բաքվում՝ Նիկոլ Դումանի տանը, ուր նա առժամանակ բնակվում էր ծածուկ: Ահարոնյանը կուռք է համարում Անդրանիկին, կուռք, որ ժողովուրդն է կռել, եւ ապա սահմանում է նրա անպարագիծ ժողովրդականության գաղտնիքը. «Ժողովուրդները պաշտում են միմիայն նրանց, որոնք իրենց համար մեռնել գիտեն»: Խոհագրության տարբեր գլուխներում Ահարոնյանը Սասունի Արծվին բացահայտում է նոր կողմից՝ առանձնացնելով մարդկային խառնվածքի ամենացայտուն, ամենաուժեղ գծերը, որոնց շնորհիվ «ոչ միայն հայության, հապա եւ մեր թշնամի ցեղերի համար Անդրանիկ առասպելական աժդահա էր», թերություններն ու քմայքոտ վրիպումները, որոնք ժողովուրդը չտեսնելու տվեց. «Երբ ժողովուրդը հոգին լայն բացած մօր պէս գրկում է իր հերոսի պատկերը, այնուհետեւ ոչ ոք եւ ոչինչ կարող է նսեմացնել նրա փառքի գեղեցկությունը», անափ հայրենասիրությունն ու ազգասիրությունը՝ «նրան լսելիս մարդ զգում էր, որ համայն հայ ժողովուրդը այս անզուգական մարդու կրծքի տակ է ամփոփված, ինչպես ճուտերը թուխսի թեւերի տակ», քանզի ինքը, համակ իր էությունը «սեր էր հայ ազգի, կույր, կատաղի, կրքոտ սեր»… Տարակարծիք քննարկում ծավալվեց գրքի «Դաշնակցություն եւ Անդրանիկ» գլխում Ահարոնյանի սրաթափանց դիտարկումների շուրջ՝ կապված Անդրանիկի՝ «սկզբից ի վեր առանձնահատուկ դաշնակցական» լինելու որակումի ու դրան տրված հեղինակային ուրույն մեկնաբանությունների հետ: Մեծագույն կուսակցությունն Անդրանիկի համար Սասունի լեռներն ու ձորերն էին, որոնք էլ թելադրում էին մարտիկին իր անելիքը: Զորեղ անհատականության ու նույնքան հզոր կամքի տեր, իր ռազմական հազվագյուտ տաղանդին գիտակից, ժողովրդի անսահման սիրուն ու հավատին հենված՝ Անդրանիկը չէր կարող հանդուրժել որեւէ հակակշիռ իր շարժումներին ու ծրագրերին: Ազգային Բյուրոյում ու Ազգային Խորհրդում նստած էին, ինչպես ինքն էր որակում, «զանազան վարժապետներ եւ ոչ կարող զինվորականներ»: Նա չէր կարողանում հանդուրժել, որ հայդուկային կռիվներ չվարած, Սասնա լեռները չչափչփած մարդկանցից պիտի կախում ունենա իր գնդի ոչ միայն պարենավորումն ու զինավորումը, այլեւ «շարժումը»: Ի՞նչ է նշանակում Անդրանիկի համար լինել դաշնակցական. Ահարոնյանը այսպես է տալիս հարցի պատասխանը. Անդրանիկը գիտի, որ իր կուսակցությունը միակն է, որ իր պես համոզված ու հավատով պայքարում է թուրք բռնապետության դեմ եւ «այդ պատճառով ինքը Դաշնակցական է»…, «… Նրա մտածումներից միշտ վրիպեցին այդ օրերի ահագին քաղաքական դժուարութիւնները, երբեք չըմբռնեց իր թրի ոյժից դուրս որեւէ գործոն»: Ավելին, Ահարոնյանի կարծիքով՝ Անդրանիկը կուսակցություն ասվածը բնավ չէր էլ հասկանում, առավել եւս պետականություն ասվածը, որի մասին «շատ թիւր ըմբռնում ուներ»: Ահարոնյանը ցավ է հայտնում նաեւ Անդրանիկի՝ զորավար դառնալու իրողության շուրջ. Սասունի Արծիվը պատվանշանների պետք չուներ, նա արդեն իսկ զորագլուխ էր ծնվել, եւ հայ ժողովուրդն իր հոգում նրան շատ ավելի բարձր պատվանդանի վրա էր դրել, քան կարող էր հասնել որեւէ զորավար: Եվ ուշագրավ հետեւությունը՝ «Ազգային հերոսները պաշտոնական փայլ ու պատուից միշտ պէտք է ազատ մնան»: Պարտիզանական կռիվների անզուգական առաջնորդի մեծագույն սխալն Ահարոնյանը համարում է առանձին գնդի հրամատարություն ստանձնելը: Զորավար Անդրանիկը միշտ վար մնաց Սասնա լեռների մենավոր ու սքանչելի հերոս Անդրանիկից…

ԹԵՀՄԻՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Նոննա Միրզոյանը ներկայացրեց Սիամանթոյի «Անդրանիկ» բանաստեղծությունը՝ հետաքրքիր մանրամասներ հաղորդելով դրա գրության շարժառիթների մասին: 1905թ., երբ Անդրանիկը հոդացավը բուժվելու նպատակով գտնվում էր Ժնեւում, ծանոթանում է Սիամանթոյի ու Դերենիկ Դեմիրճյանի հետ: Հանդիպումը չափազանց տպավորիչ է եղել Սիամանթոյի համար, եւ այդպես հյուսվել է սքանչելի ներբողյանը: Բանաստեղծն այն զետեղել է «Հայորդիներ» շարքում, ուր սկզբից մինչեւ վերջ զարգանում է ազատագրական պայքարի թեման, որի գեղարվեստականացման հիմնական ձեւը ըմբոստ, ապստամբ, դյուզացնական կերպարների ստեղծումն է: Համաժողովրդական մաքառումների գաղափարը մարմնավորող այդ հսկաները, որոնց թվում եւ Անդրանիկը, բանաստեղծի երեւակայության մեջ բարձրանում են մարմարյա եզերքների վրա՝ ապառաժի նման կանգուն, գլուխները աստղերի մեջ մխրճած եւ հողի փրկության սիրով ոգեղենացած:

Անդրանիկի կերպարը ոգեշնչել է նաեւ Հովհաննես Շիրազին, ով եւ հյուսել է սքանչելի պոեմներ՝ «Արձան Անդրանիկի», «Անդրանիկի սուրը», «Սպիտակ ձիավորը Փարիզում»: Դրանց շուրջ գեղեցիկ բանախոսությամբ հանդես եկավ Լիլիթ Մովսիսյանը՝ ուրվագծելով Շիրազի հայրենապատումի հոգեւոր սահմանները, որոնք ներառում են ժողովրդի պատմությանը դեմք ու դիմագիծ տվող նվիրական անուններ: Նրանց պատմական սխրանքի գովերգումը Շիրազի հայրեներգության հիմնաքարերից է: Շիրազը քրիստոնեական խաչի փոխարեն դավանում էր Անդրանիկի սուրը, նրանից էր ետ ուզում կորցրած տարածքները, Մասիսը: «Անդրանիկի սուրը» պոեմում, որը, ի դեպ, լույս է տեսել Շիրազի մահից հետո՝ 1991-ին, տեսիլային բանաստեղծը հանդիպում է Անդրանիկին, որ հիասթափված է, բողոքում է օտար հողում թաղված լինելու տխուր իրողությունից: Շիրազն ափսոսանքն է արտահայտում՝ «էլ հողն ինչպե՞ս թեթեւ լինի կրծքի վրա հայ դյուցազնի»: Իսկ հետո կարծես ինքն իրեն մխիթարելով՝ ասում է՝ «Քո տանջված աճյունն էլ օտար հողում չենք թողնի, Կոմիտասի պես քեզ էլ կբերենք հողն հայրենի»… Եվ իրոք, Շիրազի բանաստեղծական «խոստումը» կատարվում է. 2000թ. Անդրանիկի աճյունը տեղափոխվում է Եռաբլուր: Լ.Մովսիսյանի ելույթն ուղեկցվեց քնարական տպավորիչ ընթերցումներով:

Անուշ Էլյազյանն անդրադարձավ Անդրանիկի եւ նրա զինակիցների մասին մեր հայրենակից, գրող Էդուարդ Զոհրաբյանի հեղինակած գեղարվեստավավերագրական պատումներին, որոնք առանձին գրքով լույս են տեսել 2001թ.՝ «Պատմություններ Անդրանիկի մասին» խորագրով: Այդ հետաքրքրաշարժ պատմությունները, որոնցից քաղաբերումներ կատարեց բանախոսը, հուշագրված են 1918-1919թթ. պատմահասարակական անցուդարձից, երբ զորավարը վիթխարի քաղաքական առաքելությամբ գտնվում էր Գորիսում:

Ա.Բակունցի տուն-թանգարանի տնօրեն, պատմաբան Վարդան Սարգսյանը, իր անձնական նկատառումներն արտահայտելով քննարկվող նյութերի շուրջ, մասնագիտական-տեղեկատվական ծանրակշիռ հավելումներով ամբողջացրեց Անդրանիկի ռազմական գործունեության զանգեզուրյան շրջանը:

Չանտեսվեց նաեւ ՀԳՄ Սյունիքի մասնաճյուղի նախագահ, արձակագիր Արկադի Ծատուրյանի՝ ազգային հերոսի գեղարվեստական մարմնավորման փորձը «Անդրանիկ» խորագրով պատմվածքի շրջանակում, որով բացվում է նրա «Ծուխ ծխանի» ժողովածուն: Վավերական հիմք ունեցող այդ գրվածքի մասին խոսեց Արուս Հայրապետյանը՝ հանդիպմանը ներկա գտնվող հեղինակին ուղղելով մի քանի հարց՝ կապված պատմվածքի կենսահիմքի եւ պատմական-ժամանակագրական որոշ իրողությունների հետ:

Ա.Ծատուրյանը, լուսաբանելով պատմվածքի գրության հետ կապված որոշ կենսահանգամանքներ, իրազեկեց նաեւ, որ Անդրանիկի մասին ունի դեռեւս անտիպ մեկ ուրիշ ստեղծագործություն՝ շարադրված մի ուշագրավ հուշազրույցի հիմքով: Պատմվածքի նյութը, նախորդի պես, առնված է 1918թ. իրադարձերից, երբ Գորիսում գտնվող Անդրանիկը զորաջոկատը համալրելու նպատակով այցելել էր Խնձորեսկ եւ հայրենակներ կոչով դիմել խնձորեսկցիներին:

Քննարկման դրվեց նաեւ հայ մեծանուն արձակագիր Սերո Խանզադյանի «Անդրանիկ» պատմավեպը. գեղարվեստական փայլուն մի կոթող՝ ասելիքի ու ոճի ինքնատիպությամբ, որը, սակայն, դուրս է մնացել գրականագիտության ուշադրությունից:

Հանդիպման վերջում անդրադարձ կատարվեց նաեւ Անդրանիկ Օզանյան-Հովհաննես Թումանյան մեծ հոգիների մեծ բարեկամության ուշարժան մանրամասներին (բանախոս՝ Անի Մկրտչյան):

Թումանյանին եւ Անդրանիկին ծանոթացրել էր հայ ազատագրական պայքարի մարտիկ, սեւքարեցի Սաքոն 1904թ.: Առաջին տեսակցությունից անմիջապես հետո նրանք դարձան մտերիմ բարեկամներ: Քաջությամբ, անձնազոհ, վիթխարի հայրենասիրությամբ մեկմեկու չզիջող երկու մեծ հայերը շատ էին սիրում միմյանց: Երկուսն էլ անզուգական պատմող էին: Անդրանիկը Թումանյանին պատմում էր ոչ միայն իր կռիվներից: Նրա պատմած մրջյունի ու մոծակի մասին առակի, ավելի ճիշտ՝ դրա «սասունցիական վարիանտի» (Վ.Թոթովենց) հիման վրա է բանաստեղծը գրել իր «Մոծակ ու մրջյունը»: Անդրանիկն այդ առակը Թումանյանին պատմել է Թոթովենցի ներկայությամբ, ով եւ հուշագրել է զրույցը. «Գործ» ամսագրում տպված այդ առակը գրեթե Անդրանիկի պատմածն էր, բայց մեծ վարպետի կնիքով», - գրում է Թոթովենցը: Երկար խոսում էին իրար հետ զորավարն ու բանաստեղծը, մեկը Լոռվա բանահյուսական գոհարներն էր մատուցում, մյուսը՝ Սասնա գոհարները: **«Ի վերջո նրանք եկան այն եզրակացության, որ լոռեցիք սասունցիներն են եղել: Այս ուղղությամբ Թումանյանը շատ պրպտումներ արավ, բայց հաջողությամբ չպսակվեցին նրա ջանքերը»**, – վկայում է Թոթովենցը:

1917թ. դեկտեմբերին, երբ Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցող Թուրքիան եւ Ռուսաստանը զինադադար կնքեցին, դարձյալ օրակարգում հայտնվեց հայ ժողովրդի լինել-չլինելու խնդիրը: Զինադադարը ձեռնտու էր թուրքերին, որոնք, օգտվելով ընձեռված հնարավորությունից, շտապում էին արյունալի հաշվեհարդար տեսնել անզեն ու անպաշտպան հայ բնակչության հետ: Երկրապահ զորամաս կազմելու անհրաժեշտություն է առաջանում: Այդ զորամասը գլխավորելու ամենաարժանի թեկնածուն այդ պահին Անդրանիկն էր, սակայն շատերը կարծում էին, որ նրա նշանակումն ավելի կգրգռի թուրքերին, ովքեր վախենում էին հայ զորավարից: Ոմանք էլ համոզված էին, որ Անդրանիկը չի կարողանա դիմակայել թուրքական կազմակերպված բանակին: Մի օր Անդրանիկը զինված ներկայանում է Կովկասի գլխավոր հրամանատարին եւ հայտարարում, որ պատրաստ է ռազմաճակատ մեկնել որպես հասարակ զինվոր: Անդրանիկի այդ վճռականությունն ու մտադրությունն այնքան են ցնցում ռուսական բանակի հրամատարությանը, որ անմիջապես որոշում է կայացվում նրան Հայաստանի երկրապահ զորամասի գլխավոր հրամանատար նշանակել:

Նույն օրերին Անդրանիկը դիմում է հայ ժողովրդին բոցաշունչ, սրտառուչ կոչով: Այն հրապարակվում է թերթերում եւ ցրվում է թռուցիկների ձեւով: Կոչը մեծ հայրենասերի տագնապի ու ցասման խոսքն էր, որն արտահայտում էր ժամանակի հրամայականը՝ ազգովի համախմբվել ու ազատել, փրկել մի նոր վտանգի առջեւ կանգնած հազարավոր հայերի կյանքը: Անդրանիկի հայրենասիրական կոչին առաջինն արձագանքեց Հովհաննես Թումանյանը: Կոչի հրապարակման հաջորդ օրը «Հայաստան» օրաթերթում տպագրվեց բանաստեղծի բաց նամակը Անդրանիկին: Ամենայն Հայոց Բանաստեղծը շտապում է իր անձնական օրինակով ոգեւորել հայրենակիցներին եւ իր հերթին մի նոր կոչով է դիմում հայ ժողովրդին: **«Սիրելի՛ Անդրանիկ, - գրում է Թումանյանը, - ահավոր մոմենտի առջեւ ամեն մարդ պետք է ընդհանուրի սեղանին բերի ինչ որ ունի եւ կարող է՝ թե՛ վերահաս վտանգը կանխելու, եւ թե՛ բաղձալի խաղաղությանը հասնելու համար: Ես չորս տղա ունեմ, չորսն էլ երկրի կառավարության, Ազգային խորհրդի եւ քո տրամադրության տակ են, իսկ չորս աղջիկս էլ պատրաստակամ գնում են թիկունքի աշխատանքներին, ինչի որ ընդունակ կլինեն: Ես էլ, անշուշտ, սրանից թանկ ոչինչ չունեմ, հետեւաբար ոչինչ չեմ խնայել, միայն թե կարողանանք բոլոր ազնիվ ժողովուրդների եւ ազատասեր հոգիների հետ միասին ետ մղել վերահաս վտանգը եւ պաշտպանել ամենքիս սրբազան իրավունքներն ու ազատությունը: Ես անսահման հավատարիմ քո՝ շատ փոթորիկների մեջ ձեռք բերած փորձառությանը, վառ հայրենասիրությանն ու ազատասիրությանը, այլեւ բնական մարդասիրությանն ու զինվորական բարձր տաղանդին եւ պատրաստ գալու, ուր կկոչի քո եղբայրական ձայնը՝ համբուրում եմ հերոսական ճակատդ:**

Միշտ քո Հովհաննես Թումանյան»:

Իր բաց նամակը Թումանյանն ավարտում է հետեւյալ հետգրությամբ. «Սրա հետ միասին, որովհետեւ ես էն կարծիքին եմ, որ ամեն մի հայ այժմ պետք է իրեն դնի կամավոր տուրքի տակ, պարտավորվում եմ ամսական հարյուր ռուբլի տալ էս նպատակով մեր ընդհանուր գանձարանին»:

Անդրանիկը նույնպես բարձր է գնահատում իր մեծանուն ընկերոջ օրինակելի նախաձեռնությունը եւ օրեր անց արձագանքում է բանաստեղծին՝ հրապարակելով երախտագիտությամբ լեցուն պատասխան նամակ, որտեղ գրում է. **«Պետք է մոռնանք պահ մը գրիչը, փոխարինելով սուրին, ստեղծելու համար հայրենիքը, որուն խաղաղ ծոցին մեջ միայն կը ծաղկի գեղարվեստի կյանքը»:**

Մեր ազգային հերոսների, որոնց թվում եւ Անդրանիկի մասին գրված գեղարվեստական պատումները հայ գրականության ոսկե էջերից են եւ մի շարք կողմերով շահեկան ընթերցանության համար, քանզի մերօրյա երիտասարդությանը նույնպես պետք է տոգորել այդ բացառիկ հայորդիների գերհերոսական ոգով, բռնության հանդեպ անհանդուրժողական վերաբերմունքով, հայրենիքի ճակատագիրը կերտելու, նրա ազատությունն ու անկախությունը պահպանելու հզոր պատրաստակամությամբ ու կամքով:

ԹԵՀՄԻՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Նախակրթություն

Գորիսն այդ օրը մանուկների մոլորակ էր

Սերունդները ժամադրվել ու եկել, մեկմեկու հանդիպել են Գորիսի պետական դրամատիկական թատրոնում: Իսկ այդ մարդկանց թվում են Էմմա Հակոբյանը, Էմմա Պետրոսյանը, Նորա Սարգսյանը, Անիկ Հայրապետյանը, Արմիկ Շալունցը, Նոյեմ Միքայելյանը, Քնարիկ Ադունցը, Տաթեւիկ Ասատրյանը, Էլմիրա Այվազյանը, Զոյա Շեգունցը ու էլի մարդիկ, մարդիկ...

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը մեծարանքի խոսքեր է ասում մանկավարժների հասցեին. *«Ամեն ճանապարհ սկսվում է առաջին քայլից: Առաջին քայլով է պայմանավորված ամեն մի հաջողություն: Իսկ այդ առաջին քայլի ուսուցիչը դուք եք՝ նախակրթարանների սիրելի տնօրեններ, մանկավարժներ, դաստիարակչուհիներ: Գորիսն աշխարհին տվել է մեծեր, հիանալի մասնագետներ, զինվորականներ: Նրանք ձեր աշխատանքի արդյունքն են: Դուք կարողացել եք նրանց մեջ սերմանել լավն ու բարին, հերոսականը, եւ այսօր մեր երկիրը քաղում է ձեր աշխատանքի պտուղները: Ահա ինչու բոլորս երախտապարտ ենք ձեզ եւ գլուխ ենք խոնարհում բոլորիդ առջեւ»:*

Նա շնորհակալագրեր ու դրամական պարգեւներ է հանձնում բազմավաստակ մանկավարժներին:

Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցը մասնավորապես նշեց. *«Այսօր կարեւոր օր է բոլորիս համար: Գեղեցիկ սեռի տոնի առթիվ հավաքվել ենք այստեղ՝ մեծարելու նախադպրոցական ոլորտի մարդկանց: Իսկ նրանք բոլորը կանայք են, կանայք, որոնց ափերի մեջ տեսնում ենք հայոց ապագան: Ու ապագան այդ պայծառ է, քանի որ նրանք մեր երեխաներին կրթում, դաստիարակում են հայեցի, զարգացնում նրանց ունակությունները, լայնացնում երեխաների մտահորիզոնը, նրանց մեջ դաստիարակում գեղեցիկը, ազնվությունը: Համամարդկային արժեքների ձեւավորման հիմքը մեր մանկավարժները նախակրթարանում ճիշտ հիմքերի վրա են դրել: Ու նաեւ միասնության գաղափարը, որով Գորիսը միշտ հպարտանում է: Կրկին ու կրկին շնորհավորում եմ ձեզ՝ Կանանց տոնի կապակցությամբ, ցանկանում անամպ երկնքի տակ աշխատանք»:*

Ս. Խաչատրյանը նախակրթարանի նախկին տնօրեն Զոյա Շեգունցին հանձնեց ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ոսկե մեդալը

Շնորհակալանքի խոսքեր են ասում նաեւ վետերան մանկավարժները՝ իրենց հանդեպ ցուցաբերած ուշադրության համար:

Ու հետո բեմի տիրակալները դառնում են քաղաքի յոթ նախակրթարանի սաները: Երգում, պարում, ասմունքում են մեր կյանքի գեղեցիկ ծաղիկները եւ օրը դարձնում հոգեթով: Ամեն նախակրթարան յուրովի է ներկայացել, նրանցից յուրաքանչյուրի ելույթն ինքնատիպ է: Ամեն կատարում յուրովի իմաստ ու լուծում ունի, իր մեջ խորհուրդ ունի: Իսկ խորհուրդն այդ արդեն հավերժի, լինելիության գաղափարով է շաղախված: Նախակրթարանների սաների յուրաքանչյուր կատարման հանդիսատեսն արձագանքում է ջերմ ծափողջույններով: Երեխաները բեմի վրա դարձել էին մեր կյանքի խորհրդանիշները: Ու դա Սաիդա Ադունցի, Ժասմենա Խաչատրյանի, Նոնա Կարապետյանի, Մարիետա Խաչատրյանի, Մարիետա Մարտիրոսյանի, Կարինե Մինասյանի ղեկավարած հմուտ կոլեկտիվների շնորհիվ:

Միջոցառմանը ցուցադրվեց նաեւ կինոժապավեն, ուր Գորիսն է, ուր մեր նախակրթարանների պատմությունն է, այդ պատմությունը ստեղծող տնօրենները, դաստիրարակչուհիները, երաժիշտները, դայակները…

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ
25 մարտի 2015թ.

Ժամանակներ

Редактору газеты “Сюняц еркир”

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 3

но это обстоятельство скрывается от общественности, чтобы не обременять себя различными обязательствами.

А если по отчетности предприятие действительно убыточное, то там, однозначно, ведется двойная бухгалтерия и не выплачиваются налоги на прибыль!!! Ничем другим это не объяснить! Никто не станет разрабатывать убыточное месторождение с надеждой на улучшение условий в перспективе, ну разве что сумасшедший. Тем более что с углублением горных работ условия разработки ухудшаются а себестоимость возрастет из-за увеличения расходов на поддержание, вентиляцию, проветривание большей сети выработок и ряда других обстоятельств.

Грач, ты заявил, что поднял зарплату 477 работникам от 5 до 30%. Вполне вероятно, что это очередной хитро продуманный трюк: низкооплачиваемым категориям работников поднять на 30%, а высокооплачиваемым на 5-10%, работников же со сдельной оплатой «предоставить возможность» самим регулировать свою зарплату за счет премиальных вознаграждений.

А твое заявление что вы « держите около 300 человек просто так, учитывая социальные условия города», вообще не выдерживает никакой критики. Ты что, платишь им из «своего кармана»? Ты не выполняешь план, несешь убытки и просто так выплачиваешь жалование? Абсурд какой-то! Только не говори, что Дж. Гудман в курсе твоих инсинуаций! Так как разработка жильных месторождений отличается высокой трудоемкостью совсем неплохо иметь резерв в 300 человек . Твоим «специалистам» просто остается пошевелить мозгами, если таковые у них имеются, и обеспечить их фронтом работ и достойной зарплатой.

Все , что связано с разработкой месторождения: договор концессии и условия его получения и расторжения; себестоимость продукции, объемы балансовых и погашенных запасов и содержание металла в них; сведения о попутных компонентах в руде и их учете; размеры прибыли и налогов и многое другое, которыми можно оценить работу компании предъявить ей претензии, надежно защищено пресловутым (тхрahрчак) понятием «коммерческая тайна». О какой гласности может идти речь на таких пресс – конференциях , когда руководство компании может представлять ему угодные данные, а общественность, в силу своей некомпетентности в горном деле, сможет сформулировать только вопросы типа « сколько потрачено на озеленение или помощь бездетным», к примеру. Такие конференции иначе, как фарисейством и проформой для демонстрации призрачной гласности деятельности компании, не назовешь.

Составлять календарный план горных работ без должного обоснования и систематически срывать его выполнение; обеспечивая прибыль, заявлять о понесенных многомиллионных убытках ; допускать повсеместно технологические ошибки, в результате чего добывать руду с низким содержанием компонентов и списывать балансовые запасы, как неподтвержденные и максимально используя дешевую рабочую силу вести избирательную отработку месторождения полностью игнорируя требование «Кодекса РА о недрах» о рациональном и комплексном ее использования, - ВОТ СТИЛЬ ВАШЕЙ РАБОТЫ.

Обещания за свой счет построить памятник членам группы Ассала, погибшим в Лиссабоне, беззастенчивое использование по любому поводу имен Гарегина Нжде и Вардана Мамиконяна, масса других высказываний о преданности Родине, патриотические песнопения во время распитий водки - и все для одной цели – пиара своей личности и завоевания доверия общественности. И почему в интервью, когда речь шла о производстве, ты вдруг заговорил о планировании «крупного» мероприятия, посвященного 100-летию Геноцида, и «великодушно» сообщил, что компания в этот день работать не будет. Ты что, допускаешь, что кто-то мог выйти на работу в такой день? Нет, ты не дурак, ты хуже, ты - мразь, которая даже день поминовения трагических событий хочет использовать для пиара своей личности.

Вызывает глубокое сожаление и горечь то обстоятельство, что такое уникальное месторождение отдано тебе и твоей прислуге на разграбление, тем, кому глубоко безразличны наша Родина и ее благополучие в будущем.

Мой добрый совет тебе, как неудавшемуся менеджеру и пустомеле(датарк хосацох) вали из нашей страны, чтоб тебя не раскусили и уволили, что навсегда может сломать карьеру в горном бизнесе.

С. С. Гаспарян
Экс главный инженер Капанского ГОК, кандидат технических наук

Խմբագրության կողմից

Ս.թ. փետրվարի 18-ին ստացված սույն նամակը ներկայացնում ենք առանց միջամտության եւ մեկնաբանության:

Մի քանի տարի հետո մարզում չվերանորոգված դպրոց չի լինելու

Հանրակրթություն

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

ծառայող կրթական ծառայությունների մատուցումը: Պարտադիր կրթությունն իրականացնելու համար պետությունը նախանցյալ տարվանից հոգում է միջին-մասնագիտական կրթություն ստանալու ցանկություն ունեցող երեխաների ֆինանսական ծախսերը: Ի վերջո, պետք է հասնենք նրան, որ միջին-մասնագիտական կրթությունն ամբողջովին իրականացվի պետպատվերի շրջանակում: Այն համայնքներում, որտեղ հասանելի չի լինի մասնագիտական կրթություն, նախատեսվում է միջնակարգ դպրոցների համար մշակել արհեստագործական հոսքի ծրագիր, որտեղ նվազագույնին կհասցվեն հանրակրթական առարկաների չափորոշիչները՝ շեշտը դնելով մասնագիտական կրթության որակի վրա:

Այս տարվանից մեծ ուշադրություն են սկսել դարձնել նաեւ ներառական կրթության հետագա զարգացմանը: Ըստ անցյալ տարի համապատասխան փոփոխություններով եւ լրացումներով ընդունված փաստաթղթերի հսկայական փաթեթի՝ 2025թ. ՀՀ-ում պետք է լինի համընդհանուր ներառական կրթական համակարգ: Այդ տեսակետից մարզը նույնպես ունի պիլոտային ծրագրեր, թեպետ որոշ դպրոցներում այդ առումով արդեն առկա է աշխատանքային փորձ եւ համագործակցություն միջազգային կառույցների հետ:

Նախարարը տեղեկացրեց, որ Համաշխարհային բանկի տրամադրած նոր վարկային ծրագրի հիմնական ուղղությունը լինելու է ավագ դպրոցների հզորացումն ու կայացումը. հանրապետությունում ամեն տարի մեկ-երկու ավագ դպրոց կարդիականացվի: Վարկային ծրագրի երկրորդ ուղղությունն ուսումնական պլանների եւ առարկայական ծրագրերի վերանայումն է լինելու, որ բավականին աշխատատար է եւ պահանջելու է մասնագիտական խիստ մոտեցում: Նախարարը նշեց, որ 1-12-րդ դասարանների առարկայական ծրագրերը բավականին բարդ են, միջառարկայական կապերը հստակ ընդգծված չեն, ինչպես նաեւ բնագիտական առարկաները, կարծես, անուշադրության են մատնվել, ինչը նկատելի է ընդունելության քննություններից (դիմորդների ճնշող մեծամասնությունը նախապատվությունը տալիս է հումանիտար գիտություններին, իսկ բնագիտական մասնագիտությունները, որ ունեն ռազմավարական նշանակություն, հետին պլան են մղվել): Այս ամենի հանրագումարում կունենանք հանրակրթական նոր ծրագրեր, որ կհանգեցնի դասագրքերի վերանայման, ուսուցիչների վերապատրաստման անհրաժեշտության:

Պետության առաջնային ծրագրերից են նաեւ միջնակարգ եւ ավագ դպրոցներում վիրտուալ լաբորատորիաների ստեղծումը, դպրոցների համակարգչային համակազմի, հատկապես ավագ դպրոցների նյութագույքային թարմացումը: Նախատեսվում է ուսումնական գույք տրամադրել նաեւ այն միջնակարգ դպրոցներին, որտեղ ավագ դասարաններում սովորում է 100-ից ավելի աշակերտ:

Խոսելով միջին մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների մասին՝ Ա.Աշոտյանը նշեց, որ պետությունն ամեն հնարավորն անում է այդտեղ ստեղծված համակարգային խոչընդոտները վերացնելու համար:

Նախարարի հավաստմամբ՝ լուրջ աշխատանքներ են տարվում նաեւ նախակրթարանների կայացման համար: **«Այն համայնքներում, որտեղ նախակրթարաններ չկան, պետությունը պատրաստ է համայնքի 10 տոկոսի ներդրման դեպքում հիմնել նախակրթարան: Ցանկալի է, որ դրանք ստեղծվեն դպրոցի հիմքի վրա, քանի որ այդ դեպքում նախակրթարանի սանն արդեն աշակերտ է համարվում եւ աջակցություն ստանում պետբյուջեից: Համայնքային մանկապարտեզների հիմքի վրա ստեղծված նախակրթարանները ֆինանսավորվում են բացառապես համայնքային բյուջեից, եւ համայնքը պիտի հաշվարկի իր ծախսերը՝ արդյո՞ք կարող է նախակրթարան պահել»,** – հավելեց նա:

Որպես վերջաբան նախարարը նշեց, որ, չնայած բազում խոչընդոտների, Սյունիքի մարզում կրթության որակը բարձր է, ոսկե մեդալակիրների թվով անցյալ տարի մարզն առաջինն էր, որ վկայում է մարզի եւ մայրաքաղաքի դպրոցների՝ միեւնույն հարթության վրա գտնվելու մասին: Նա առանձնահատուկ նշեց Գորիսի N4 եւ Սիսիանի N3 ավագ դպրոցների բարձր ցուցանիշների մասին:

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, պետության կայացման գործում կարեւորելով դպրոցի նշանակությունը, նշեց, որ տնօրենների եւ ուսուցիչների խնդիրը, նախեւառաջ, կրթության բարձր որակի ապահովումն է: **«Մենք պիտի գիտակցենք, որ աշխարհի բոլոր խաչմերուկներում գիտելիքի հեղափոխություն է, եւ պիտի կարողանանք բանավիճել աշխարհի իմաստասերների հետ: Ես հասկանում եմ, որ այսօր բազում դժվարություններ կան, բայց մենք պետք է ըմբռնումով մոտենանք դրանց. 25 տարի է՝ շրջափակման մեջ ենք, եւ բնավ էլ հեշտ չէ այդպիսի պայմաններում միանգամից բոլոր խնդիրները լուծել»,** – նշեց մարզպետը: Նա վստահեցրեց, որ մի քանի տարի հետո Սյունիքի մարզում չվերանորոգված դպրոց չի լինելու:

Նախարարն ու մարզպետը պատվոգրեր հանձնեցին դպրոցականների առարկայական օլիմպիադայի մարզային փուլում առաջին տեղ զբաղեցրած 43 աշակերտի, ովքեր մարզպետի կողմից արժանացան դրամական պարգեւի (բացի մարզային փուլում հաղթողներից՝ դրամական պարգեւ ստացան նաեւ հանրապետական փուլում մաթեմատիկա եւ ֆիզիկա առարկաներից մրցանակային տեղ զբաղեցրած աշակերտները): Մարզպետը համոզմունք հայտնեց, որ մարզային փուլում հաղթողները հանրապետական փուլում նույնպես բարձր ցուցանիշներ կգրանցեն՝ եւս մեկ անգամ հանրապետությունում հնչեցնելով մարզի անունը:

Նախարարի հաջորդ կանգառը Սիսիանի N5 հիմնական դպրոցն էր, որտեղ, չնայած ցուրտ եղանակին, տիրում էր ջերմ մթնոլորտ: Ինչպես դպրոցի տնօրեն Գոհար Հայրապետյանը նշեց, օրը երիցս պատմական էր՝ պայմանավորված ԿԳ նախարարի այցելությամբ, արձանախմբի բացմամբ եւ նմանատիպ միջոցառման կազմակերպմամբ: «Հիշում եմ եւ պահանջում» խորագրով միջոցառումը, որ յուրօրինակ ու հետաքրքիր մոտեցմամբ էր ներկայացնում Եղեռնի զոհերի ոգեկոչումը, համահունչ էր դպրոցի բակում բացված արձանների դիմաց աշակերտների գեղեցիկ ելույթներին: Խաչաղբյուրի բացման պատիվը տրվեց ԿԳ նախարար Արմեն Աշոտյանին եւ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին, որից հետո աշակերտներն աշխարհի չորս ծագերին վարուժանական տողերով խաղաղություն, բերրիություն, առատություն եւ պտղաբերություն մաղթեցին:

Հովհաննես Թումանյանի կիսանդրու շուրջը թումանյանական հերոսներն էին ու բառ ու բանը, հայրենիքի հավերժության կոչը: Իսկ Ակսել Բակունցի կիսանդրու շուրջը կորսված հայրենիքի հազրոյական կարոտն էր, որ թեւածելով համակում էր բոլորին: Գրիգոր Զոհրապի կիսանդրին, որ դեռ կկանգնեցվի, ներկաներին կհիշեցնի մեծ արձակագրի եւ քաղաքական գործչի՝ Հայոց ցեղասպանության համար պատասխան տալու հայերիս արդար պահանջը: Կոմիտասի արձանի շուրջ հավաքվածներն ունկնդրեցին կոմիտասյան գեղեցիկ մշակմամբ կատարումներ: Դե իսկ Դպրության խոնարհ սյուներ հուշարձանի առաջ արդեն տառաճանաչ առաջին դասարանցիները երդվեցին անաղարտ պահել մայրենի լեզուն: Ի դեպ, տնօրենի տեղեկացմամբ՝ արդեն քանի տարի է՝ իրենց դպրոցում ավանդույթ են դարձել առաջին եւ իններորդ դասարանցիների երդման արարողությունները: 9-րդ դասարանն ավարտող աշակերտները, հրաժեշտ տալով հիմնական դպրոցին, երդվում են հարազատ մնալ իրենց կրթօջախին, անաղարտ պահել մայրենին եւ հայրենիքի համար պիտանի մարդ դառնալ:

ԿԳ նախարարը բավականին դրական գնահատեց արձանախմբի բացումը՝ շեշտելով, որ նախաձեռնությունը ողջունելի է եւ, բնականաբար, ունի դաստիարակչական կարեւոր նշանակություն երեխաների համար: Նա խոստացավ դպրոցին նվիրել հինգ համակարգիչ: **«Մենք ունենք հրաշալի սերունդ, որին պիտի ճիշտ ձեւով դաստիարակել եւ կրթել՝ վաղվա բարեկեցիկ ապագան կերտելու համար: Մեր պարտավորությունն է այս հրաշք երեխաների համար ստեղծել լավագույն պայմաններ՝ վաղվա պիտանի քաղաքացու ձեւավորման համար»,** – եզրափակեց իր խոսքը նախարարը:

Վերջում նշենք, որ արձանախմբի տեղադրման մտահղացման հեղինակը դպրոցի նախկին տնօրեն Հովիկ Ալեքսանյանն է, իսկ քանդակագործը լուսահոգի Իվան Սիմոնյանն է, ում գործը կշարունակի որդին՝ Հայկ Սիմոնյանը (վերջինս ավարտին կհասցնի Գրիգոր Զոհրապի կիսանդրու կերտումը):

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Քաջարանի բժշկական կենտրոնի վիրահատական բլոկը վերագործարկվեց

Առողջապահություն

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 5

21-ին կատարվել է առաջին վիրահատությունը: Բժշկական կենտրոնը պատրաստ է՝ հիվանդներ ընդունելու եւ անվտանգ բուժօգնություն ցուցաբերելու», – եզրափակեց Վիրաբ Մանասյանը:

Ն.Գեւորգյանը նշեց, որ ներհիվանդանոցային վարակների կանխարգելման համալիր ծրագիրն ուղեցույց է մարզի բոլոր բուժհաստատությունների համար, քանի որ մինչ այժմ նման ստուգումներ, կարելի է ասել, ոչ մի հիվանդանոցում չեն իրականացվել:

«Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության ավագ բուժքույր Արմեդա Վանեսյանը մանրակրկիտ ներկայացրեց ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահության պետական տեսչության Սյունիքի մարզային կենտրոնի հարուցած վարչական վարույթի շրջանակներում իրականացված զննման արձանագրության մեջ նշված թերությունները եւ վերջիններիս շտկման ուղղությամբ իրականացված աշխատանքները: Արմեդա Վանեսյանը նշեց, որ կատարված բոլոր աշխատանքների համար կազմվել են համապատասխան գրանցամատյաններ, փաստաթղթային բոլոր հարցերը կարգավորված են:

Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանը նշեց, որ քաղաքապետարանը լուրջ ֆինանսական ներդրումներ է կատարել եւ կատարում հիվանդանոցում՝ համապատասխան բուժարքավորումներ ձեռք բերելու, բուժանձնակազմին վերապատրաստելու համար: Քաղաքապետի հավաստմամբ՝ 2016թ. քաղաքի բնապահպանական ծրագրի մեջ ներառել են նաեւ թափոնների անվտանգ հեռացման համար սարքավորում ձեռք բերելու նախագիծը: *«Անկախ գերատեսչային ենթակայությունից՝ Քաջարանի հիվանդանոցը ծառայում է քաջարանցիներին եւ տարածաշրջանի մարդկանց, եւ նմանատիպ վարակների կանխարգելումը յուրաքանչյուրիս պարտքն է»,* – եզրափակեց Վարդան Գեւորգյանը:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Ռաֆայել Գրիգորյան

Խորը վշտով հայտնում ենք, որ կյանքից հեռացել է երկարամյա մանկավարժ, Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցի նախկին տնօրեն, քաղաքապետի խորհրդական Ռաֆայել Հմայակի Գրիգորյանը:

Ծնվել է 1949թ. հուլիսի 13-ին ՀԽՍՀ Ղափանի շրջանի Վերին Հանդ գյուղում: 1966թ. ավարտել է Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցը, որից հետո մեկ տարի աշխատել է Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատում՝ էլեկտրափականագործ: 1967-1972թթ. սովորել եւ ավարտել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը եւ գործուղվել Քաջարան: 1972-1976թթ. Քաջարանի թիվ 2, 1976-1984թթ. Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցներում աշխատել է պատմության ուսուցիչ եւ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ: 1984-2014թթ. Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրենն էր:

2014թ. Ռաֆայել Գրիգորյանն արժանացել է Քաջարանի պատվավոր քաղաքացու կոչման: 2014թ. հոկտեմբերի 10-ին նշանակվել ու մինչեւ կյանքի վերջին օրն աշխատել է Քաջարանի քաղաքապետի՝ կրթության, մշակույթի, հասարակության հետ կապերի գծով խորհրդական:

Ամուսնացած էր, ունի երկու որդի, մեկ դուստր:

Ռաֆայել Գրիգորյանի ընտանիքին, բարեկամներին ու ընկերներին հայտնում ենք մեր ցավակցությունն ու զորակցությունը:

Քաջարանի քաղաքապետարան

«Այունյաց երկիր» թերթի տարեկան հաշվետվություն

Համաձայն «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի՝ ներկայացնում ենք «Այունյաց երկիր» թերթի 2014թ. ֆինանսական հաշվետվությունը (դրամով):

Համախառն եկամուտ՝ 17,547,000
Այդ թվում՝
Նվիրատվություն՝ 6,600,000
Սուբսիդիա՝.....500,000
Գովազդ (առանց ԱԱՀ-ի)՝ 1,224,000

Այունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում:

Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:

Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 30.03.2015թ.:

ՎԱՃԱՌՎՈՒՄ է երեք սենյականոց բնակարան Կապանի Թումանյան 9 շենքի 5-րդ հարկում (թատրոնի հարեւանությամբ): Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել (077) 062802 հեռախոսահամարով: